Մենք պարտավոր չենք գնալ եւ ինչ-որ խոշոր ուժերի կողքին կանգնել, դռնեռի տակ սպասել, թե մեզ ով ինչ է առաջարկելու: Մենք նման առաջարկություններ չենք ստացել, սակայն գտնում ենք, որ թեկուզ փոքր ուժերը միավորվելով՝ կկարողանան ձեւավորել նոր, լուրջ ու ազդեցիկ բեւեռ, որը կկարողանա հաղթահարել անցողիկ շեմը:

Կարդացեք՝ էջ 4

Զանգրագետ քաղաքացուն իրավունք տալ՝ սահմանադրական հանրաքվեին մասնակցելու գիտությունների դոկտորի հետ հավասար կարգավիճակով, հանցագործություն է: Ինչո՞ւ խառատն ու ֆրեզերագործը, օդաչուն ու ծովայինը.... միմյանցից որակապես առանձնացվում են կարգով եւ ըստ այդմ էլ՝ տարբեր իրավունքներ ու պարտականություններ ունեն:

Կարդացեք՝ էջ 5

Մեր հոդվածն իրենց կայքէջերում, Ֆեյսբուքում, այլ հարթակներում զետեղել էին «Նիդերլանդական օրագիրը», Չեխիայի «Օրերը», այլ լրատվամիջոցներ, այդ բարբարոսական արարքին անդրադարձել էին «Ինտերկապ» եւ այլ հասարակական կազմակերպություններ, ինչի համար շնորհակալ ենք: Բոլորիս համատեղ ջանքերով հարցը լուծվեց:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 20 (4155), 17 փետրվար, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Չնայած իշխանությունը փորձում է քարոզչական վակուում առաջացնել՝ տպավորություն ստեղծելով, թե միայն իրենք են ու իրենց սարերը, քաղաքական դաշտն ամայի է, ընդդիմությունը՝ մեռած, սակայն այս օրերին ընդդիմադիր դաշտում ակտիվ վերադասավորումներ են ընթանում, բանակցություններ: Նոր միավորներ են ձեւավորվում: Փետրվարի 15-ին տեղի է ունեցել «Մայր Հայաստան» կուսակցության համագումարը, եւ կուսակցության նախագահ Անդրանիկ Թեւանյանը հայտարարել է, որ հունիսի 7-ի ընտրություններին մասնակցելու են «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հետ՝ «Առաջարկ Հայաստանին» ծրագրով: Թեւանյանի խոսքով՝ իրենք փորձել են լայն ընդդիմադիր կոնսոլիդացիա ապահովել եւ ընտրություններին մասնակցել մեկ ընդդիմադիր բեւեռով, սակայն չի հաջողվել, ուստի, նրա խոսքով՝ «Մայր Հայաստանն» իր գաղափարներով հարստացնելու է «Առաջարկ Հայաստանին» ծրագիրը՝ դառնալով համահեղինակ: Տեղեկացանք, որ արդեն բանակցություններ են սկսվել նաեւ «Հայրենիք» կուսակցության ղեկավար Արթուր Վանեցյանի եւ Գագիկ Ծառուկյանի միջեւ: Նույն պլատֆորմով մասնակցելու մասին ավելի վաղ հայտարարել էր նաեւ «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության նախագահ Սուրեն Սուրենյանցը:

Տեւական դեգերումներից հետո ՔՊ-ում երեկ վերջապես նշանակվեց ԱԺ առողջապահության մշտական հանձնաժողովի նախագահ՝ այդ պաշտոնում միակ առաջադրված թեկնածու վանաձորցի Վանիկ Օհանյանը: Առաջիկա քառօրյա նիստին հարցը կմտնի օրակարգ, փակ, գաղտնի քվեարկությամբ կհաստատեն թեկնածուին, որը մի քանի ամիս կաշխատի՝ մինչեւ այս գումարման ավարտը: Նախորդ շաբաթ ՔՊ-ն կրկին նույն պաշտոնի թեկնածուի ընտրություն էր կազմակերպել, բայց առաջադրված երկու թեկնածուից ոչ մեկը բավարար ձայներ չէր հավաքել՝ ո՛չ Վանիկ Օհանյանը, ո՛չ Տրդատ Սարգսյանը: Նկատենք, որ այդ հանձնաժողովին նախագահ չի գալիս, Հռիփսիմե Հունանյանը հարկադրաբար հեռացավ մի անզգույշ հայտարարությունից հետո, իսկ նրանից առաջ էլ Նարեկ Ձեյնալյանն էր, որին Փաշինյանը sms-ով ազատեց, հերթը Վանիկ Օհանյանինն է: Ի դեպ, Օհանյանը ՔՊ ցուցակի առաջատարներից է՝ 204-րդ տեղում է, 62 քվեով:

Ալիեւին պատասխանեք

Ինչքան թուլանում են Հայաստանի դիրքերը միջազգային ասպարեզում, այնքան շատ է ՀՀ գործող իշխանությունը խոսում Հայաստանի ինքնիշխանության, որոշումներ կայացնելու ազատության մասին: Ինչքան շատ է Ալիեւը տարբեր հարթակներում կրկնում «Զանգեզուրի միջանցք» եւ «Արեւմտյան Ադրբեջան» եզրույթները, ինչքան ավելի ցինիկ են դառնում նրա հայտարարությունները՝ ադրբեջանցիների վերադարձի, ՀՀ Սահմանադրությունը փոխելու մասին, ինչքան ավելի եղկելի հայտարարություններ է անում մեր գերիների մասին՝ նրանց համեմատելով ֆաշիստների, պատերազմի հանցագործների հետ, եւ շեշտում, որ նրանց ազատ չի արձակելու, սրանք ավելի հաճախ են խոսում խաղաղության հաստատման մասին: Ոչ մի զիջում ու հավաստիացում, որ Հայաստանը տարածքային պահանջներ չունի Ադրբեջանից, եւ «Արցախ» բառն անգամ իսպառ ջնջել է իր լեքսիկոնից ու հիշողությունից, Ադրբեջանին հետ չեն պահում ՀՀ սուվերեն տարածքի նկատմամբ ապօրինի ու անամոթ, այդ թվում՝ տարածքային պահանջներ ներկայացնելուց: Մի կողմից՝ նա իր «քաղհասարակության» ներկայացուցիչներին ուղարկում է Հայաստան՝ մեր «քաղհասարակության» հետ հանդիպման, մյուս կողմից՝ Մյունխենում հայտարարում է, որ միջանցքն անցնելու է «Ադրբեջան-Հայաստան-Ադրբեջան (Նախիջեւան)-Թուրքիա եւ հետո Եվրոպա» երթուղով: Այսինքն՝ Փաշինյանի այն հեքիաթները, թե երկաթուղին Նախիջեւանից մտնելու է Երասխ, Գյումրի եւ դեպի Եվրոպա գնացող մեծ երթուղու մասն է կազմելու, սուտ են, Ադրբեջանն ու Թուրքիան ոչ մի մտադրություն չունեն Հայաստանի ապաշրջափակմանը մասնակցելու եւ մեզ տնտեսական օգուտներ ապահովելու: Ալիեւին այնքան են սրանք երես տվել, որ նա օր-օրի մեծացող ախորժակի հետ նաեւ ծաղրում է հայերին, ասում է՝ ձեր խաղաղության խաչմերուկը կկառուցեք, երբ Բայդենը վերադառնա իշխանության:

ՔՊ եռօրյա ներկուսակցական ընտրություններից հետո կանանց ցանկում 5-րդ ցուցանիշը գրանցած Լիլիթ Մակունցը վերջերս ընկերական շրջապատում անկեղծացել է, որ Նիկոլ Փաշինյանը հենց իրեն է տեսնում հաջորդ գումարման խորհրդարանի նախագահի դերում: ԱՄՆ-ում ՀՀ նախկին դեսպան Մակունցը, որն իշխանափոխությունից առաջ Փաշինյանի անգլերենի ուսուցիչն է եղել, իսկ իշխանափոխությունից հետո «Իմ քայլը» խմբակցության քարտուղարն էր, աչքի է ընկնում մեղմ, բոլորի հետ լեզու գտնելու ունակությամբ: Իհարկե, վատ չէ, որ իշխող թիմում նման վստահություն եւ ախորժակ ունեն, որ ընտրություններից հետո իրենք կրկին իշխանություն են լինելու, բայց հարցն այն է, որ եթե անգամ այդպես լինի, ապա Մակունցը չի ձգի այդ պաշտոնին, եւ քաղաքական խոսք ու ճկունություն ունեցող թեկնածու է պետք: Ի դեպ, մյուս հավակնորդները՝ Հայկ Կոնջորյանն ու Ռուբեն Ռուբինյանը, ոչ միայն Մակունցից, այլ նաեւ գործող խոսնակ Ալեն Սիմոնյանից շատ ձայն են ստացել, սակայն դեռ ցուցակի կազմման երկրորդ փուլ կա, որտեղ առաջին 50 թեկնածուների շրջանակը նորից է քվեարկության դրվելու՝ արդեն տեղերի հերթականությունը որոշելու համար:

ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ՝ ՆՈՒՅՆ ՄԱՐԴԻԿ

Ընտրական օրենսգիրքը նախատեսում է, որ տվյալ կուսակցության ընտրական ցուցակը երկու մասից բաղկացած լինի, երկրորդ մասում՝ ազգային փոքրամասնության 2-ական ներկայացուցիչ պետք է ընդգրկվի: Գրել ենք, որ եզդիական համայնքի հարցում ՔՊ-ն արդեն որոշում ունի, եւ թեկնածուն գործող պատգամավոր Ռուստամ Բաքոյանն է: Տեղեկացանք նաեւ, որ ռուսական համայնքից էլ կրկին գործող պատգամավոր Ալեքսեյ Սանդիկովի թեկնածությունն է ընտրվել, սակայն անորոշ է քրդական եւ ասորական համայնքների թեկնածուների հարցը: Մի բան պարզ է, որ Կնյազ Հասանովին չեն պատրաստվում խորհրդարան տանել: Հիշեցնենք, որ 2021 թ. արտահերթ ընտրություններով ազգային փոքրամասնություններին հատկացվող 4 տեղերից 3-ը բաժին հասավ ՔՊ-ին, ասորական համայնքից պատգամավոր Արսեն Միխայլովը նշանակվեց վարչապետի օգնական:

ԱԺ-Ն ԴԱՐՁԵԼ Է ԱԶԳԱՅԻՆ ՎՏԱՆԳԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Մեր զրուցակիցն ***Արտաշես սարկավագ Աջապահյանն*** *է:*

- ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը ռուսական Дождь-ի եթերում հայտարարել է, որ Հայ առաքելական եկեղեցում կան մանկապիղծ հոգեւորականներ, սակայն անուններ չի նշել: Այս հայտարարությունը բուռն արձագանք է ստացել: Ըստ Ձեզ՝ սա ի՞նչ է:

- Գործ ունենք պարզ զրպարտանքի, սրիկայության, բանսարկության, լկտիության հետ: Սեփական քաղաքական շահերն առաջ տանելու համար կեղտոտ զրպարտություն է, զրպարտում են մի ամբողջ եկեղեցի եւ դրա համար ոչ մի պատասխանատվության չեն ենթարկվում: Այսպես երկար չի կարող շարունակվել, մի օր պատասխան պետք է տան իրենց արարքների համար: Օգտագործելով այս առիթը՝ ուզում եմ իրավապահների ուշադրությունը հրավիրել: Ես խնդրում եմ նրանց, որ անհապաղ զբաղվեն այս հարցով, սակայն առաջին հերթին՝ Աննա Հակոբյանի հայտարարությամբ: Նա դեռ ամիսներ առաջ էր հայտարարել, որ Հայ առաքելական եկեղեցում կան մանկապիղծ հոգեւորականներ: Գործ ունենք ակնհայտ հանցագործության հետ: Եթե իրենք կոնկրետ մանկապղծության դեպք կամ դեպքեր գիտեն եւ թաքցնում են դրանք, անուններ չեն տալիս, ստացվում է, որ հովանավորում են մանկապղծությունը եւ դառնում են մանկապիղծի հանցակիցը: Իսկ եթե նման բան չկա, դա նշանակում է, որ հերթական զրպարտությունն է: Եթե կա նման բան, եւ իրենք լռում են, այստեղ կա երեք տարբերակ. կամ իրենք հանցակից են եւ թաքցնում են հանցագործին, երկրորդ տարբերակն այն է, որ չկա նման բան, նրանք զրպարտում են եկեղեցին, եւ երրորդ տարբերակն էլ այն է, որ այդ ինֆորմացիան իրենք օգտագործում են իրենց օգտին, եւ այդ մանկապիղծը հիմա տիրադավների շարքում է: Այսպիսով՝ նրանք իրենք իրենց հայիոյում են եւ դարձնում հանցագործ: Ստացվում է, որ այս հայտարարությունն առաջին հերթին հենց իրենց դեմ է: Դեմ է թե՛ օրենքի տեսանկյունից, թե՛ իրավունքի: Իրավապահները պետք է անհապաղ գործ հարուցեն այս առիթով, եւ եթե անգամ այս իշխանությունների օրոք գործը հաջողություն չունենա, ապա հաստատ մի օր պետք է ամեն ինչ ջրի երես բարձրանա: Մեղավորը կամ անպատասխանատու հայտարարություն անողները պետք է բանտում հայտնվեն: Ալեն Սիմոնյանը, լինելով ԱԺ նախագահ, զրպարտում է լայն հանրությանը, քանի որ չի տալիս անուն:

- Փաստաբան Արսեն Բաբայանը երեկ հայտնել էր, որ Արշակ սրբազանի հետ կապված հայտնի տեսանյութերը միջազգային փորձաքննության են ենթարկվել, պարզվել է, որ այն իրական չէ: Ըստ Ձեզ՝ դա կապ ունի՞ նրա դեմ հարուցված վարույթի հետ եւ ի՞նչ ազդեցություն կթողնի գործի վրա:

- Այն, որ իշխանություններն ընտրել են եկեղեցահալած ճանապարհը, պարզ է, սակայն Վեհափառի դեմ դուրս եկած հոգեւորականները զրկվեցին այն հիմքերից, որի հիման վրա դուրս էին եկել Վեհափառի դեմ: Այս փորձաքննությունը ցույց տվեց, թե որքան խորագետ է Վեհափառը, եւ որքան իմաստնություն ու մեծ համբերություն ունի նա: Աստվածաշունչն ասում է՝ ով համբերի, կապրի: Վեհափառի համբերությունն իսկապես տիեզերական է, եւ այն կենդանի վկայությունն է Քրիստոսի խոսքերի: Փաստացի, Արշակ սրբազանին մեղադրում էին մի բանում, որի հետ նա կապ չուներ, իսկ Վեհափառին էլ մեղադրում էին, որ նա սրբազանին կարգալույծ չի հռչակում:

- Շաբաթ օրը ՀՀ դատախազությունը մի կարմիր գիծ էլ հատեց՝ քրեական հետապնդում հարուցեց կաթողիկոս Գարեգին Բ-ի նկատմամբ՝ Արման Սարոյանի հետ կապված դատական ակտի կատարմանը խոչընդոտելու մեղադրանքով, եւ արգելվեց կաթողիկոսի ելքը Հայաստանից, ինչով փորձում են ձախողել Ավստրիայում կայանալիք Եպիսկոպոսաց ժողովը:

- Այս իշխանության համար կարմիր գծեր գոյություն չունեն, եւ եթե կան մարդիկ, ովքեր կարծում են, թե կան ինչ-որ կարմիր գծեր, որոնք իշխանությունները չպետք է հատեն, ապա չարաչար սխալվում են, եւ դա իրենց խնդիրն է: Այս մարդկանց վարած քաղաքականությունը, նրանց հոգեւոր եւ հոգեմտավոր կարողությունները բացարձակապես ոչ մի թույլատրելի եւ անթույլատրելի սահման չունեն: Սրանց համար ամեն ինչ թույլատրելի է: Անգամ այն, ինչը մենք կարող ենք անվանել սահմռկեցուցիչ, սրանց համար նորմալ է: Եթե այսպես շարունակվի, ես հավատում եմ, որ անգամ մարդակերությամբ սկսեն զբաղվել: Սատանայական ճանապարհով են գնում, լիակատար կործանման ճանապարհն են բռնել, սակայն դժոխքը հատակ չունի, ինչքան ընկնեն, այնքան ավելի են խորը իջնելու: Ցավոք, իրավիճակը սա է: Մեր պետական համակարգը վերածվել է տեռորիստական համակարգի, պետական կառույցները, ԱԱԾ-ն շեղվել են իրենց բուն առաքելությունից եւ ոչ թե ազգի անվտանգությունն են ապահովում, այլ հակառակը՝ ազգը մեծ վտանգի մեջ են դրել: ԱԱԾ-ն դարձել է ազգային վտանգաբերության ծառայություն: Շատ ցավալի է այս ամենը տեսնելը: Ես համարում եմ, որ մենք այլեւս չունենք պետականություն, որովհետեւ եթե մի երկրում Եկեղեցին հալածվում է, հալածվում է պետական այրերի կողմից, դա նշանակում է, որ իշխանությունն ազգինը չէ, չի կարող ազգային եկեղեցին հալածվել մի տեղ, որտեղ կա ինքնիշխան պետություն: Հայ առաքելական եկեղեցին միշտ էլ օտարի տիրապետության ժամանակ է հալածվել: Հիմա էլ բացառություն չէ, մենք օտար տիրապետության տակ ենք գտնվում, սակայն ես հույս ունեմ, որ գոնե ինչ-որ մի պահի Աստծո ողորմածությամբ կկարողանանք այս ցավալի էջը շրջանցել՝ վերականգնելով մեր պետականությունը:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՐԵԽԱՆԵՐԸ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ ԵՆ ԳՅՈՒՂ, ԻՍԿ ՀԱՅՐԸ ԿԱԼԱՆԱՎԱՅՐՈՒՄ Է

Գեղարքունիքի Ծափաթաղ համայնքում 3-ամյա Տիգրանի սպանությունը՝ անցած հոկտեմբերի 27-ին, ցնցեց հանրությանը: Մի քանի օր կորած տղային փնտրելուց հետո նրա դին գտան դաշտում՝ խեղդամահ արված: Անհնարին էր պատկերացնելը, որ հայրը կարող է իր 3-ամյա որդուն խեղդամահ անել՝ կասկածելով, որ Տիգրանն իր որդին չէ, ուստի նույնիսկ ՆԳՆ հաղորդագրությանը մարդիկ չհավատացին:

Դեպքից անմիջապես հետո սպանված տղայի քույրն ու 3 եղբայրները ժամանակավորապես տեղափոխվեցին Հայ օգնության ֆոնդի երեխաների պաշտպանության կենտրոն: Հայրը կալանավորվեց: Կարծիք կար, որ մայրն էլ պակաս մեղավոր չէ կատարվածի մեջ, սակայն տեղեկացանք, որ մի քանի ամսվա ուսումնասիրությունից հետո որոշվել է զավակներին հետ ուղարկել իրենց տուն՝ հանձնելով մոր խնամքին:

Ծափաթաղի վարչական ղեկավար **Դավիթ Գզողյանը** մեզ ասաց, որ դատական գործընթացը շարունակվում է, երեխայի հայրը կալանքի տակ է. «Երեխաներն իրենց մայրիկի հետ անցած շաբաթ տեղափոխվել են գյուղ: Հիմա այդ տանն ապրում է մայրը՝ իր 4 երեխաների հետ: Երեխաներից 3-ը հաճախում են դպրոց: Ինքս, Միասնական սոցիալական ծառայության աշխատակիցները եւ մարզպետարանից, պարբերաբար այցելություններ ենք կատարում: Այս պահին էլ հոգեբաններ են աշխատում մոր հետ: Որ ասեմ, թե շատ ուրախ են՝ ուրախ չեն, բայց հոգեկան ծանր վիճակում էլ չեն՝ ըստ մասնագետների գնահատականի: Պարբերաբար օգնություն ենք տրամադրում, մայրն այս պահին չի աշխատում»:

Ծափաթաղի Հենրիկ Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն **Հերմինե Խարազյանն** էլ մեզ հետ զրույցում նշեց, որ երեխաները ոչ մի բանի կարիք չունեն, պարտաճանաչ հաճախում են դպրոց. «ՀՕՖ-ից իրենց ամեն ինչ տրամադրել են: Երեխաների մոտ բավականին լավ տեղաշարժ կա, ահագին ակտիվացել են, շփումը դպրոցականների հետ շատ նորմալ է: Իրենց դասընկերներին շատ կարոտել էին: Ծնողը հետեւողական է: Հիմնական կարիքը՝ կարոտն էր դասընկերների հանդեպ: Երեկ միջոցառում էինք կազմակեպել, բավականին լավ է շփումը աշակերտների հետ»:

3-ամյա երեխայի սպանության մեջ մեղադրվող հոր մեղադրականում գրված է. «Ա. Օվանեսովին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, կասկածներ ունենալով, որ Տիգրանն իր երեխան չէ, եւ այդ կապակցությամբ առաջացած վրեժի շարժառիթով, 2025թ. հոկտեմբերի 27-ին իր մերձավոր ազգական հանդիսացող, անօգնական վիճակում գտնվող անչափահաս Տիգրան Օվանեսովին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ծափաթաղ բնակավայրին հարակից դաշտամիջյան հատվածում ձեռքով կոկորդից սեղմելու եղանակով սպանել է նրան, ապա դիակը դաշտամիջյան տարբեր հատվածներում թաքցնելուց հետո տեղափոխել է Ձիլ բնակավայր տանող խաչմերուկին հարակից դաշտամիջյան հատված, որտեղ 2025թ. նոյեմբերի 2-ին դիակը հայտնաբերվել է: Դատարանի որոշմամբ՝ Ա. Օվանեսովի նկատմամբ կիրառված կալանքի ժամկետը երկարաձգվել է 3 ամիս ժամկետով՝ մինչեւ 2026-ի ապրիլի 3-ը»:

Նյութերը՝ Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

ՔՊ-ական ի պատճառով 25 մլն դրամ են վճարել համայնքի բյուջեից

Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ՔՊ-ական համայնքապետ Խաչիկ Վարդանյանը 2022-ին պաշտոնը ստանձնելուց հետո համայնքապետարանի տասնյակ աշխատակիցների՝ առանց ծանուցելու, աշխատանքից ազատել էր, ասելով՝ դիմում գրեք, գնացեք, թե չէ վատ վերջաբան կունենա: Չէին գրել՝ ազատել էր: Համայնքապետարանի աշխատակազմի նախկին քարտուղար Թամարա Գրիգորյանը, որն այժմ ավագանու անդամ է, գնումների մասնագետ Սմբատ Սուքիասյանը, հողաշինարար Արեն Ֆրանգյանը, աուդիտի մասնագետ Արտյոմ Տոնոյանը դիմել են դատարան՝ աշխատանքում վերականգնվելու եւ համայնքապետարանից հարկադիր պարապուրդի ժամանակահատվածի համար աշխատավարձի չափով գումար բռնագանձելու պահանջով: Դատարանը բավարարել է հայցադիմումները, եւ Գյուլագարակի ՔՊ-ական համայնքապետը ստիպված է եղել կատարել դատարանի որոշումը:

Մեր տեղեկություններով՝ համայնքի բյուջեից մոտ 25 մլն դրամ է վճարվել նախկին աշխատակիցներին: Բացի այդ, համայնքապետարանը վճարել է նաեւ փաստաբանների եւ պետտուրքերի գումարները: Համայնքի ղեկավար Խաչիկ Վարդանյանի հետ կապ հաստատել չհաջողվեց: Համայնքապետի առաջին տեղակալ **Ռուսլան Օհանյանին** հարցրինք՝ որքա՞ն գումար է համայնքի բյուջեից փոխհատուցվել նախկին աշխատակիցներին: «Տեղս հարմար չի, արձակուրդ եմ, անձնական գործերով դուրս եմ եկել, Ձեր հարցին չեմ կարող պատասխանել»: Տեղեկացանք, որ միայն 8 մլն դրամ համայնքի բյուջեից տրամադրվել է աշխատակազմի նախկին քարտուղար Թամարա Գրիգորյանին: Նրան վերականգնել են, սակայն նա 3 օր անց իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից: Հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար մոտ 3-ական մլն դրամ են ստացել հողաշինարար Արեն Ֆրանգյանը եւ աուդիտի մասնագետ **Արտյոմ Տոնոյանը**: Արտյոմ Տոնոյանը մեզ ասաց, որ չի ցանկանում այլեւս աշխատել համայնքապետարանում. «Միայն այն, որ համայնքապետը ՔՊ է, հերիք է, որ հետը էլ չաշխատեմ»: Արեն Ֆրանգյանը վերականգնվել է աշխատանքում, բայց 5 ամիս հետո ՔՊ-ական համայնքապետը անհիմն պատճառով նրան կրկին ազատել է աշխատանքից: Ֆրանգյանը կրկին դիմել է դատարան:

Հայ հեղինակներն այլեւս պետք չեն

2025-ի ամռանը Պատանի հանդիսատեսի թատրոնը մեկնել էր անժամկետ արձակուրդ՝ վերանորոգման աշխատանքներով պայմանավորված: Ապա փոխվել է թատրոնի տնօրենը. Էմին Թորոսյանին փոխարինել է Գոռ Մարգարյանը, ինչին հաջորդել է թատրոնի խաղացանկի փոփոխությունը՝ անցած կամ նախանցած տարվա ներկայացումները հանվել են ՝ «Վերջին ուսուցիչը», «Մեր թաղը», «Խենթը»: Եվ դրա մեջ մարդիկ հեռուն գնացող նպատակներ են տեսել. «Նար Դոսի «Մեր թաղը» ցույց է տալիս, թե ինչպես է սոցիալական միջավայրը ձեւավորում եւ հաճախ կոտրում մարդուն:

Վարդգես Պետրոսյանի «Վերջին ուսուցիչը»՝ թե ինչպես կարելի է պահպանել արժանապատվությունն ու արժեքները նույնիսկ փոփոխվող ու անտարբեր ժամանակներում: Ռաֆֆու «Խենթը»՝ թե ինչպես պետք է արթնանալ եւ պայքարել հանուն ազգային ու մարդկային ազատության»: ՖԲ օգտատերը նկատում է, որ սա պատահականություն չէ, հայ հեղինակներն էլ մեզ պետք չեն. «Ազգային ինքնության գաղափարներն «իրական Հայաստանում» մեծ վտանգ են»:

Թատրոնի երկարամյա դերասանուհի **Անահիտ Ղուկասյանից** հետաքրքրվեցինք՝ ճիրք է խաղացանկը փոխվել, եւ ինչո՞ւ են խաղացանկից հանվել վերոնշյալ դասական ստեղծագործությունները: Ղուկասյանն ասաց. «Ցավոք, դա ճշմարտություն է: Ես՝ ինքս, խաղում էի «Մեր թաղում»: Պարզվեց, որ դեկորացիան վատ վիճակում է, իսկ նորոգելը շատ ավելի թանկ է նստում, քան նոր ներկայացում բեմադրելը, ինչի համար ես շատ ցավում եմ: Մյուս ներկայացումների մասին հստակ չեմ կարող ասել, թե ինչու են հանվել խաղացանկից, հավանաբար, էլի նման պատճառաբանություններով: Մենք դեռ մեր աշխատանքը թատրոնում չենք սկսել: Ասում են, որ նոր ներկայացումներ են պատրաստվում բեմադրել, օրինակ՝ Վիլյամ Սարոյանի «Մարդկային կատակերգությունը», սակայն դեռ ոչինչ հստակ չէ, քանի որ թատրոնում դեռեւս աշխատանքը չի վերսկսվել: Ասում են՝ աշխատանքը սկսելու ենք շուտով, սակայն թե երբ է «շուտով»-ը, ես չգիտեմ: Ամեն դեպքում, ես կասեմ հետեւյալը. «Մեր թաղը» դպրոցահասակների համար շատ կարեւոր գործ է: Այսօր ո՞վ է գիրք բացում, կարդում, գրեթե ոչ մեկը, ուստի նման ստեղծագործությունը խաղացանկից հանելը ես համարում եմ խիստ անընդունելի: Մեր դասականներին գոնե այդպես ծանոթ լինեն երեխաները: Ինձ համար սա ընդունելի որոշում չէ: Ի դեպ, Նար-Դոսի մի քանի գործ դարձրել էինք մի ներկայացում, այնպես չէր, որ մի գործ էր, սակայն որոշում կայացնողներն այդպես են որոշել, հուսանք՝ կվերանայեն իրենց որոշումները»:

Թաքանցիկ, բաց ուղղորդված ընտրություններ

Վարտվեցին իշխող թիմի ներկուսակցական եռօրյա ընտրությունները, եւ համացանցը խաղաղվեց ՔՊ-ականների՝ կարկտահարության նմանվող ստատուսներից, ագրեսիվ քարոզչությունից: Անցած երեք օրերին մի այնպիսի աղմուկ-աղաղակ, հարայ-հրոց էին դրել այդ առիթով, որ կարելի էր կարծել, թե դարի իրադարձությունն է տեղի ունենում: Պարզ է, որ նպատակը հանրային հարթակներն իրենցով լցնելն է, հուժկու քարոզարշավ ներկայացնելը եւ իրենց հետագա հաղթանակի նկատմամբ վստահություն ներշնչելը: Իսկ այս թատերականացված ներկայացմամբ նաեւ փորձում էին ցույց տալ, որ թափանցիկ, արդար, ժողովրդավար պրոցես է ընթանում, եւ անգամ ուղիղ եթերում բոլորի աչքի առաջ ընտրական ցուցակ են ձեւավորում:

Մինչդեռ, ՔՊ-ի ներսից ստացվող տեղեկատվությունից դատելով, շատերն են դժգոհ մնացել այս գործընթացից եւ կարծում են, որ իրականում տեղի են ունեցել ուղղորդված ընտրություններ, «տասովկաներ»: Չնայած արգելված են եղել քարոզչությունն ու պատվիրակներին «մոտենալը», սակայն շատերը դա արել են, ուստի ոմանց արդյունքները շատ հեռու են իրենց իրական վարկանիշներից. ոմանք ավելին են ստացել, ոմանք՝ ցածր: Դիցուք, Սահմանադրական դատարանի աշխատակազմի նախկին ղեկավար Վլադիմիր Վարդանյանի օգտին քվեարկել է 932 ընտրողից 431-ը: Որքան էլ Վարդանյանը գրեթե միակ պրոֆեսիոնալ իրավաբանն է համարվում եւ օրենսդրական աշխատանքին ունակ եզակիներից է, ՔՊ շարքերը նրան լավ չեն ճանաչում, նա գրեթե մարզային այցեր չի անում, ակտիվ շփումներ չի մեջ չէ տարածքայինների հետ, շատերը կասկածում են, որ նրա համար ասվել է ինչ-որ մարդկանց, որ Վարդանյանը լինի առաջին հիսունյակում: Եվ նա 24-րդ տեղում է հայտնվել: ՔՊ-ում տարակուսանքի տեղիք է տվել կապանցի Դավիթ Դանիելյանի ստացած ձայների քանակը. նա 28-րդ տեղում է՝ 402 ձայնով: Նկարիչ, նախկին փոխնախարար Դանիելյանին էլ քչերը գիտեն, նա «քֆուրչիների»՝ ծանր հրետանու բրիգադից չէ, ուստի նրա ստացած բարձր ձայների միակ գաղտնիքը վերագրում են վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանին, որը թիմի գորշ կարդինալն է եւ իր մտերիմին անձամբ է առաջ հրում: Նա, ըստ ամենայնի, ջանք չի խնայել, որ վերջինս հայտնվի խորհրդարանում, եւ դրա համար օգտագործել է իր պաշտոնական դիրքը:

Կամ՝ ՔՊ գրասենյակի գործավարուհի՝ հանրությանն անհայտ ոմն Քնարիկ Հարությունյան, տեղ է գտել առաջին 50-ի մեջ՝ 298 ձայնով, իսկ գործող պատգամավորներից շատերը հայտնվել են ցուցակի ծայրամասում: Ասում են՝ նա ի պաշտոնե կապի մեջ է եղել պատվիրակների հետ եւ ծածուկ քարոզչություն է արել իր օգտին: Զավեշտալի է նաեւ սեպտեմբերից պատգամավոր աշխատող, բայց ծպտուն չհանած Էսթեր Այվազյանի ստացած 90 ձայնը, նրան այնքան չեն ճանաչում թիմում, որ պատգամավորը ֆեյսբուքյան իր էջը գովազդի տակ էր դրել, որ իմանան իր մասին: Կամ, ասենք, Գնել Սանոյսանը ընդունեց, որ հետեւում է թողել բազում ակտիվ թիմակիցների, ոմանց կարծիքով, իր նախկին կապերն է բանեցրել. երբ ՏԿԵ նախարար էր, նա կուրացիա էր անում տարածքայինները: Ընտրությունների ամենամեծ անակնկալներից մեկն առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի 554 ձայնն է. սեպտեմբերին՝ վարչության ընտրությունների ժամանակ, նա 404 ձայն էր ստացել: Ոմանք կատակում են, թե վարչաբենդում նրա պարը մի 150 լրացուցիչ ձայն բերեց նախարարին, կանանցից նա ամենաշատ ձայներ ստացածն է: Հաջորդը Ալիսա Ղազարյանն է: Կանանց ջոկատում Արուսյակ Ջուլհակյանն է՝ 471 ձայն, Հասմիկ Հակոբյանը՝ 469, Լիլիթ Մակունցը՝ 438, Սրբուհի Գալյանը՝ 406, Նազելի Բաղդասարյանը՝ 400, Արուսյակ Մանավազյանը՝ 362, Զարուհի Բաթոյանը՝ 351, Տաթեւիկ Գասպարյանը՝ 298, եւ Սոնա Ղազարյանը՝ 293 ձայնով: Սրանք են առաջին 50 տեղում ընդգրկված անունները:

274 հոգանոց նախընտրական ցուցակը գլխավորում է Նիկոլ Փաշինյանը, 932 վավեր քվեաթերթիկներից նրան 894 անձ է քվեարկել: Իսկ ընտրություններին մասնակցել է 1028 կուսակցական: 96 քվեաթերթիկ անվավեր է ճանաչվել: Այսինքն, 38 կուսակցական չի քվեարկել Փաշինյանի օգտին, եւ սա նշանակում է, որ անգամ թիմում նա անառարկելի հեղինակություն չունի՝ իբրեւ առաջնորդ: Առաջին փուլից հետո սպասվում է եւս մեկ քվեարկություն՝ մոտ մեկ ամիս անց, ամենաշատ ձայներ հավաքած առաջին 50 թեկնածուներից կազմված ցուցակը նորից կդրվի քվեարկության, եւ կորոշվի ընտրացուցակում դասավորությունը:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

Հայ ժողովրդին չի հետաքրքրում, թե որ ուսապարկը քանի ձայն ստացավ

Խորհրդարանական ընտրություններին մնաց ընդամենը չորս ամիս, եւ քաղաքական ուժերը սկսել են ոչ պաշտոնական քարոզարշավը: Ընդդիմադիր ուժերը գնում են մարզեր, հանդիպումներ ունենում համախոհների հետ, դահլիճներ լցնում: Իշխանությունն էլ իր հերթին է իմիտացիա ստեղծում, թե բուռն գործունեություն է ծավալում, իբրեւ թե կայացած կառույցներ ունեն, ամենուր իրենք են, իրենց ձեւավորած օրակարգերն են ամենաքննարկվողն ու առանցքայինը: Պարզ է, որ իշխանությունը միշտ առավելություն ունի ընդդիմության նկատմամբ՝ փող ունի, վարչական ռեսուրսներ ունի, իրենցն են Հանրային ռադիոհեռուստաընկերությունը եւ շատ այլ լրատվամիջոցներ: Իրենց փիառի համար կիրառում են եւ պետական միջոցներ, եւ հովանավորների ու ֆինանսավորողների պակաս չունեն՝ ուրիշ ինչ է պետք ընտրություններում հաղթելու եւ լիարժեք փիառի համար:

Քաղաքագետ **Սերգեյ Շաքարյանցը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով այս ամենի մասին, նկատում է. «ՔՊ-ն՝ իր առաջնորդի գլխավորությամբ, փորձում է տպավորություն ստեղծել, թե իբրեւ մենք՝ հայերս, տառապում ենք՝ սպասելով գալիք ընտրություններին, ինչը մեծ սուտ է: Հայ ժողովուրդը ոչ թե տառապում է՝ սպասելով ընտրություններին, կամ թե որ ուսապարկը քանի ձայն ստացավ, այլ մտածում է իր անվտանգության, իր ապագայի, իր երեխաների, թոռների ապագայի մասին: Մարդիկ այսօր մտահոգված են Թրիփ կոչվածով, ինչը վտանգել է ոչ միայն Հայաստանը, այլեւ ողջ տարածաշրջանը: Հայաստանը դարձրել են գերտերությունների մրցակցության կիզակետ, ինչը շատ վտանգավոր է, իսկ հայ հասարակությունը դա շատ լավ է հասկանում եւ չի ցանկանում այլեւս վտանգել իր կյանքը, ապագան: Բացի այս ամենը, մեր սուվերեն տարածքից զգալ մաս օկուպացված է: Ի՞նչ եք կարծում՝ սա՞ է ավելի շատ հետաքրքրում եւ անհանգստացնում Վայոց Ձորում, Սյունիքում կամ Տավուշում ապրող մարդկանց, թե՞, ասենք, այն հարցը, թե Արայիկ Հարությունյանը քանի ձայն ստացավ ՔՊ-ի ընտրություններում: Ասեմ ավելին՝ հանրությանն այլեւս չի հետաքրքրում նախկիններ-ներկաներ պատերազմը, չի հետաքրքրում թալանը: Մարդիկ ակնկալում են պաշտպանվածություն: Այս ընտրությունների արժեքը որոշվում է հենց դրանով՝ կզգա՞նք մինիմալ անվտանգություն, թե՞ չենք զգա: Մարդիկ այսօրվա իշխանությունների հետ այս կապակցությամբ մեծ հույսեր չեն կապում, որքան էլ որ իշխանությունները փորձեն պատերազմի պարտության, Արցախի հայաթափման եւ 5 հազար զոհի համար մեղադրել ուրիշներին: Հասարակությունը գիտակցում է, թե այդ ամենի ետեւում ով է կանգնած, եւ ով է այն մարդը, որ պատերազմ ու պարտություն է բերել:

Մենք գործ ունենք մի իշխանության հետ, որը վերարտադրվելու համար պատրաստ է ամեն ինչի՝ հոսանքազրկումներ, սպառնալիքներ, ամեն, ամեն ինչ: Վենսն օրեր առաջ հայտարարեց, որ աջակցում է Նիկոլի իշխանությանը, եւ դա պատահականություն չէր, նրանց համար շատ կարեւոր է, որ Նիկոլը նորից ընտրվի, իսկ դրա համար նախ պետք է իմիտացիա ստեղծել, որ այս փուլում ամենակարեւոր բանը ընտրություններն են»:

Իսկ ինչո՞վ է զբաղված ընդդիմությունը: «Ընդդիմությունը դեռեւս ձեւանում է, թե ընդդիմություն է: Հատկապես՝ Էդմոն Մարուքյանը, Գագիկ Ծառուկյանը: Ես չեմ ուզում որեւէ մեկին պիտակավորել, սակայն նման ուժերից ի՞նչ ընդդիմություն: Ո՞ւմ են խաբում, ի՞նչ են ակնկալում: Մոռացե՞լ են, թե ոնց էին Նիկոլի կողքը կանգնել, գուցե իրենք մոռացել են, սակայն մարդիկ չեն հավատում, որ նրանք խաբվել են»:

Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԴԱՇԻՆՔ

ՊԱՐՏԱՎՈՐ ՉԵՆՔ ԳՆԱԼ ԵՎ ԽՈՇՈՐ ՈՒԺԵՐԻ ԴՌՆԵՐԻ ՏԱԿ ՍՊԱՍԵԼ, ԹԵ ՄԵԶ ՈՎ ԻՆՉ Է ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ

Ռեֆորմիստների կուսակցության նախագահ Վահան Բաբայանը ՌԴ-ում ՀՀ նախկին դեսպան, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Վաղարշակ Հարությունյանին առաջարկել է գլխավորել իր կուսակցության նախընտրական ցուցակը 2026 թվականի հունիսին կայանալիք խորհրդարանական ընտրություններում: Այս մասին Ֆեյսբուքի իր էջում օրեր առաջ գրել է Վահան Բաբայանը: «Հանդիպել եմ ՀՀ նախկին պաշտպանության նախարար, ՌԴ-ում ՀՀ նախկին արտակարգ եւ լիազոր դեսպան, գեներալ-լեյտենանտ Վաղարշակ Հարությունյանի հետ: Քննարկել ենք ինչպես Հայաստանի արտաքին եւ ներքին մարտահրավերները եւ ստեղծված իրավիճակը, այնպես էլ առաջիկա ընտրություններում հնարավոր մասնակցության ձեւաչափերը: Շատ քաղաքական հարցերում ունենալով միեւնույն մոտեցումները՝ առաջարկել եմ միասնական հանդես գալ հունիսի 7-ին կայանալիք ՀՀ ԱԺ ընտրություններին, եւ հաշվի առնելով պարոն Հարությունյանի մեծ փորձը՝ նաեւ առաջարկել եմ գլխավորել մեր ցուցակը առաջիկա ԱԺ ընտրություններին»,- գրել էր Բաբայանը: Այս հայտարարությունը բուռն քննադատությունների տեղիք է տվել՝ մարդիկ կարծում են, որ հերթական կեղծ ընդդիմադիրն է հայտնվել, որի միակ նպատակը ձայներ փոշիացնելն է: Թեմայի մասին «Հրապարակը» զրուցել է **Վահան Բաբայանի** հետ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

- Մեծ գաղտնիք բացահայտած չենք լինի, եթե նկատենք, որ բոլոր այն ուժերը, ովքեր անցողիկ շեմը հաղթահարելու հնարավորություն եւ ռեսուրս չունեն, ձայներ են փոշիացնելու եւ Փաշինյանին հեռացնելու կամ խանգարելու փոխարեն մեծ լավություն են անելու նրան: Ինչպես 2021 թվականի խորհրդարանական ընտրությունները ցույց տվեցին՝ փոշիացված ձայները խիստ օգտակար են իշխող թիմի համար, ինչքան շատ են չանցնող կուսակցությունները, այնքան շատ է «փոշին»: Ինչո՞ւ եք որոշել մասնակցել ընտրություններին: Չկա՞մ մտավախություն, որ Դուք ձայներ եք փոշիացնելու:

- Ես արդեն հոգնել եմ այդ մասին լսելուց: Գիտեք, այդ ձայներ փոշիացնողներին կոչ եմ անում՝ սրբել իրենց վրայից քաղաքական փոշին, որովհետեւ իրենց վրա արդեն փոշի է դրված: Իսկ ինչ վերաբերում է նրան, թե մենք ինչ արդյունքներ կարձանագրենք, ցույց կտա ժամանակը, մենք մեր ուժերի վրա վստահ ենք, եւ եթե ինչ-որ մարդիկ ուզում են միանալ մեզ՝ խնդիր չկա, մենք հիմա էլ բանակցում ենք տարբեր քաղաքական ուժերի հետ, որպեսզի կոնսոլիդացվենք, սակայն դեռեւս չեմ նշի անուններ: Ամեն դեպքում, կներեք, բայց մենք պարտավոր չենք գնալ եւ ինչ-որ խոշոր ուժերի կողքին կանգնենք եւ դռների տակ սպասենք, թե մեզ ով ինչ է առաջարկելու: Մենք նման առաջարկություններ չենք ստացել, չունենք, սակայն գտնում ենք, որ թեկուզ փոքր ուժերը միավորվելով՝ կկարողանան ձեւավորել նոր, ավելի լուրջ ու ազդեցիկ բեւեռ, որը կկարողանա հաղթահարել խորհրդարանական անցողիկ շեմը եւ, ինչու չէ՝ ավելի լավ արդյունքներ ցուցաբերել: Հայաստանում այսօր այնքան բարդ իրավիճակ է, որ շատ դժվար է ասելը, թե ինչ կլինի: Ամեն դեպքում, իմ կուսակցությունն արդեն այս տարի իր տասնամյակն է նշելու, եւ ինձ մեղադրել, որ նոր եկել եմ եւ ձայներ եմ փոշիացնելու, լուրջ չեմ համարում: Կփորձենք գործով ապացուցել, ավելի քիչ կխոսենք ու կգործենք: Կփորձենք, կստացվի՝ կստացվի, ամեն դեպքում, մենք վստահ ենք մեր ուժերի վրա:

- Որտեղի՞ց այդ վստահությունը, ինչո՞ւ եք այդքան համոզված, որ անցողիկ շեմը հաղթահարելու եք:

- Ես վստահ եմ մեր ժողովրդի բանականության, խոհեմության վրա, իմաստնության վրա: Որոշողը լինելու է ՀՀ քաղաքացին, մեզ ընտրողը նա է, այլ ոչ թե նեղ շրջանակները, էլիտաներն ու օլիգարխները: Մենք վստահ ենք, որ մեզ քաղաքացին ձայն է տալու, մենք առաջ ենք քաշում միջին խավի խնդիրները: Մենք գալու ենք, որպեսզի միջին խավը պաշտպանենք, մարդիկ պետք է պաշտպանված լինեն: Հույս ունենք, որ այդ միջին խավն իր քվեն կտա մեզ:

- Վաղարշակ Հարությունյանն այնքան էլ լավ համբավ չունի, մեղմ ասած: Նրան մարդիկ մեղադրում են 2020-2021 թվականներին Փաշինյանի հետ միասին հողեր հանձնելու մեջ: Մտավախություն չունե՞ք, որ ձեր միավորումը կարող է պրոհիշխանական երանգ ստանալ:

- Այդ տարածքների եւ նման հարցերի մասին ես կարծում եմ, որ պարոն Հարությունյանն առաջիկայում անպայման կխոսի: Նա պաշտպանության ոլորտում ունի մեծ փորձ, մեծ կենսագրություն ունի, հարգանք է վայելում թե՝ ներսում, թե՝ դրսում, իհարկե, կարող են հարցեր առաջանալ, քննադատություններ, իսկ մենք պատրաստ ենք այդ ամենը լսելուն:

- Կենսագրություն ունենալը բավակա՞ն է ձայներ հավաքելու համար: Արդյո՞ք կարեւորն այն չէ, թե ինչպիսի ընկալում ունի նա հանրության շրջանում:

- Հանրությունն իր գնահատականը տալիս է ընտրությունների միջոցով: Եթե Ձեր նշած բացասական երեւույթներն իսկապես հանրության մոտ կան, ապա հանրությունը մեզ կմերժի: Իսկ եթե ոչ, ապա մենք մեր ֆրակցիան կձեւավորենք խորհրդարանում:

- Գաղտնիք չէ, որ մի ժամանակ ջերմ հարաբերություններ ունեիք ՀՀԿ-ի հետ, Սերժ Սարգսյանի: Այժմ ինչպե՞ս են հարաբերությունները:

- Հանրապետականները իմ լավ ընկերներն են, ես նրանց շատ հարգում ու սիրում եմ, շատ հարգում եմ կուսակցությունը՝ նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ, սակայն մենք առանձին կուսակցություն ենք եւ ունենք մեր օրակարգը:

ԻՆՉՊԵՍ ՁԱԽՈՂՎԵՑ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Դիլիջան համայնքը 2017թ. նոյեմբերի 20-ին հայցադիմում է ներկայացրել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիա»՝ ԱՍԲԱ հիմնադրամի՝ 2011թ. հոկտեմբերի 27-ին կնքված համաձայնագիրը եւ 2012թ. օգոստոսի 17-ին կնքված անշարժ գույքի առքուվաճառքի պայմանագիրը լուծելու, հողամասը վերադարձնելու, հողամասի նախկին տեսքը վերականգնելուն պարտավորեցնելու պահանջներով: 2017թ. նոյեմբերի 23-ին հայցադիմումն ընդունվել է դատարանի վարույթ:

Դատարանի 2018թ. հունիսի 27-ի որոշմամբ, «Բնակարանների երաշխավորման հոլանդական միջազգային կազմակերպություն» հիմնադրամը ներգրավվել է որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող 3-րդ անձ: Դատարանի 2018թ. նոյեմբերի 9-ի որոշմամբ, հայցվորի միջնորդությունը՝ հայցի հիմքի եւ առարկայի փոփոխության վերաբերյալ, բավարարվել է: Դատարանի 2019թ. հունիսի 9-ի որոշմամբ, սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է, մինչեւ թիվ ՎԴ/9301/05/18 եւ թիվ ՎԴ /0329/05/19 վարչական վարույթներով վերջնական դատական ակտեր կայացնելը: Դատարանի 2024թ. նոյեմբերի 12-ի որոշմամբ, սույն քաղաքացիական գործի վարույթը վերսկսվել է: Դիլիջանի քաղաքապետարանի ներկայացուցիչը դատարանին հայտնել է, որ 2011թ. հոկտեմբերի 27-ին կնքված համաձայնագրով համայնքը պարտավորվել է ԱՍԲԱ-ին որպես սեփականություն հանձնել Դիլիջան քաղաքի Մոլդովական թաղամասի 33 000քմ հողը եւ դրանց վրա գտնվող շինությունները, վերապահումով, որ ՀՀ կառավարությունը պետք է տա իր համաձայնությունն այդ հողամասի հատկացման հարցում: Սակայն կառավարությունը համաձայնություն է տվել միայն 10 հազար 116 քմ հողամասի ու դրա վրա առկա շինության համար: Կողմերի միջեւ դրա վերաբերյալ պայմանագիր է կնքվել, որով քաղաքապետարանը սեփականության իրավունքով ԱՍԲԱ-ին է փոխանցել Դիլիջանի Մոլդովական փողոցի 7/2 կիսակառույց բազմաբնակարան շենքը՝ 10 հազար 116 քմ սպասարկման հողամասով:

Հողամասը պետք է սեփականության իրավունքի ձեւակերպում ստանար, եւ այնտեղ պետք է 45-50 բնակարան կառուցվեր՝ հետագա 10 տարվա ընթացքում: Քաղաքապետարանի ներկայացուցիչը հայտնել է, որ ԱՍԲԱ-ն 45-50 միավոր անշարժ գույքի փոխարեն կառուցել է 14-ը, կիսատ է թողել ծրագրի իրականացումը: Քաղաքապետարանի ներկայացուցիչը նշել է նաեւ, որ ԱՍԲԱ-ի կողմից վարկային պարտավորությունների խախտման հետեւանքով պարտապանը սկսել է գույքի արտադատարանական իրացման գործընթաց, ինչի արդյունքում տրամադրված տարածքը կարող է դառնալ այլ անձի սեփականություն: 3-րդ անձի ներկայացուցիչը դատարան առարկություն է ներկայացրել, հայտնել է, որ 2012թ. ապրիլի 23-ին «Բնակարանների երաշխավորման հոլանդական միջազգային կազմակերպություն» կամ Դի Այ Ջի Էյջ-ի եւ «Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիա» հիմնադրամի՝ ԱՍԲԱ-ի միջեւ կնքվել է վարկային համաձայնագիր, որով Դի Այ Ջի Էյջ-ը ԱՍԲԱ-ին տրամադրել է 361 միլիոն 784 հազար 304 ՀՀ դրամ երկարաժամկետ վարկ, որը համարժեք է 711 հազար 750 եվրոյին:

2012թ.նոյեմբերի 29-ին Դի Այ Ջի Էյջ-ի եւ ԱՍԲԱ-ի միջեւ կնքվել է գրավի (հիպոթեքի) պայմանագիր, որով վարկային համաձայնագրով ԱՍԲԱ-ի ստանձնած վարկային պարտավորության համար գրավադրվել է ԱՍԲԱ-ին սեփականության իրավունքով պատկանող Դիլիջանի Մոլդովական փողոց 7/2 հասցեում գտնվող 10 հազար 116 քմ հողը եւ անավարտ շենք-շինությունը, ինչպես նաեւ՝ վարկային համաձայնագրով նախատեսվող, նոր կառուցվող 30 բնակարանները: 2026թ. հունվարի 30-ին դատավոր Գրիգորի Վարդանյանը վճռել է Դիլիջան համայնքի հայցն ընդդեմ «Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիա» հիմնադրամի, մերժել:

ԱՐԴ

«ԻՐԵ՞ՆՑ ՁԵՎՈՎ», ԹԵ՞ «ՄԵՐ ՁԵՎՈՎ». ՈՎ ԿՀԱՂԹԻ

Փաշինյանի թիմը տարածում է, որ թույլ չեն տալու Սամվել Կարապետյանի հիմանադրած «Ուժեղ Հայաստան» կուսակցությանը՝ մասնակցել խորհրդարանական ընտրություններին: Հնարավոր է, որ նույնկերպ վարվի նաեւ Գագիկ Ծառուկյանի եւ այլ ընդդիմադիր ուժերի հետ: Դրա մասին բացահայտ չի հայտարարվում, բայց ակնարկները հուշում են, որ նրա նպատակը կառավարելի եւ հանրային վստահություն չվայելող կուսակցությունների հետ մրցելն է, որտեղ պարտվողները շնորհակալություն կհայտնեն՝ իրենց նման արտոնություն շնորհելու համար:

Եթե չեք դիտել, դիտեք Սաշա Կոենի «Դիկտատոր» ֆիլմը, որը սկսվում է նրանով, որ Վադիայի Հանրապետության գեներալ-ծովակալ Ալադինը կազմակերպում է սեփական օլիմպիական խաղերը, վազքի մրցաշարում կրակում է իր մրցակիցների վրա, սպանում է մրցավարին եւ սահմանում համաշխարհային ռեկորդ՝ ստանալով 14 ոսկե մեդալ: Փաշինյանն Ալադինի մարմնացումն է, նման բոլոր այն բռնապետերին, որոնք սիրում են իրենք ընտրել իրենց մրցակիցներին՝ նախապես չեզոքացնելով նրանց, ում հետ մրցակցության մեջ կարող են պարտվել:

Սամվել Կարապետյանի եւ նրա «Ուժեղ Հայաստան» կուսակցության հանրային աջակցությունը հունից հանում է Փաշինյանին, նա հասկանում է, որ դա չի տեղավորվում իր գծած խաղի կանոնների մեջ, նրան հնարավոր չէ մեղադրել թալանի, կոռուպցիայի, պետական միջոցների անարդյունավետ օգտագործման եւ բոլոր այն մեղքերի մեջ, որոնցում ինքը մեղադրում է ՀՀ նախկին նախագահներին: Կարապետյանը եւ նրա կուսակիցները Հայաստանում երբեւէ պաշտոն չեն զբաղեցրել, բյուջետային փողերի հետ առնչություն չեն ունեցել, հակառակը՝ նրանց համեմատությամբ ինքն է նախկինը, ինքն է 8 տարի շարունակ վատնել պետական միջոցները, այդպես էլ որեւէ հանրային բարիք չստեղծելով, դրանք ծառայեցնելով բացառապես սեփական անձի եւ շրջապատի բարեկեցությանը, հարստացմանը:

Չնայած դրան, Փաշինյանին թվում է, թե ինքը գիտի Սամվել Կարապետյանի թույլ կողմը. նա երկքաղաքացի է, ՌԴ քաղաքացի է: ՀՀ Սահմանադրությունը թույլ չի տալիս երկքաղաքացուն հավակնել վարչապետի պաշտոնին: «ՀՀ օրենսդրությամբ քաղաքացիները կարող են հիմնադրել կուսակցություն, ինչ վերաբերում է վարչապետի թեկնածուին. ՀՀ օրենսդրությամբ եւ Սահմանադրությամբ երկրորդ, տվյալ դեպքում՝ նաեւ երրորդ երկրի քաղաքացիություն ունեցող անձը չի կարող լինել ոչ պատգամավորի, ոչ վարչապետի թեկնածու, հետեւաբար էն, ինչ դուք ասում եք, պարզապես ոչ դե յուրե, ոչ դե ֆակտո գոյություն չունի, հետեւաբար, գոյություն չունեցող բանը ես հարկ չեմ համարում մեկնաբանել»,- ասում է Փաշինյանը՝ ի պատասխան հարցին, թե ինչպես է վերաբերվում «Ուժեղ Հայաստանի»՝ Սամվել Կարապետյանին ՀՀ վարչապետի թեկնածու առաջադրելուն, լավ իմանալով, որ Կարապետյանը չի պատրաստվում պատգամավորի թեկնածու առաջադրվել, իսկ վարչապետի պաշտոնը կարող է զբաղեցնել միայն Սահմանադրության փոփոխությունից հետո:

Բայց դա ասում է մի մարդ, որը 2018-ին վարչապետ է ընտրվել սահմանադրական կարգը տապալելու ճանապարհով, ՀՀ Սահմանադրությամբ վարչապետ կարող է ընտրվել ԱԺ մեծամասնության ներկայացուցիչը, մինչդեռ ինքը, լինելով ԱԺ փոքրամասնության ներկայացուցիչ, շանտաժի ենթարկեց մի ամբողջ երկրի եւ հասարակության՝ հայտարարելով, որ կամ ինքը կլինի Հայաստանի վարչապետ, կամ Հայաստանը վարչապետ չի ունենա:

Հիմա նա ասում է. «2026թ.-ից հետո չեք տեսնելու քաղաքականությամբ զբաղվող օլիգարխ, նախկին նախագահ, բոլորը դուրս են շպրտվելու»: Ի՞նչ եք հասկանում, երբ նա սպառնում է, որ չեք տեսնելու քաղաքականությամբ զբաղվող նախկին նախագահ կամ օլիգարխ: Արդյոք դա չի՞ նշանակում, որ բռնությամբ եւ ապօրինությամբ թույլ չի տալու, որ նախկին նախագահների կամ խոշոր գործարարների ստեղծած կուսակցությունները մասնակցեն 2026 թ. խորհրդարանական ընտրություններին: Ասվածը միայն այդպես կարելի է հասկանալ, քանի որ եթե նրանք մասնակցեն ընտրություններին եւ հաղթեն, ապա կհայտնվեն խորհրդարանում, եւ, հետեւաբար, հնարավոր չի լինի արգելել քաղաքականությամբ զբաղվելը: Նրանք կզրկվեն այդ հնարավորությունից միայն մի դեպքում, եթե Փաշինյանի հրահանգով այդ կուսակցությունները ճանաչվեն օրենքից դուրս, եւ նրանց թույլ չտան մասնակցել ընտրություններին: Այլ մեխանիզմ գոյություն չունի, եթե չհաշվենք, որ սա հերթական պոպուլիստական եւ որեւէ հետեւանք չենթադրող հայտարարությունն է:

Փաշինյանը, սովորույթի համաձայն, իր հայտարարության ձայնագրությունը դնում է ենթակաների բերանում եւ ստիպում, որ նրանք եւս կրկնեն: Իր ճեպազրույցից ուղիղ մեկ օր հետո գրեթե նույնը կրկնեց նրա ենթակա Ալեն Սիմոնյանը: «Կա հարց՝ Սամվել Կարապետյանը կամ իրա նմանները Ռուսաստանում կարո՞ղ էր ասել՝ այն փոքրիկ խմբակը... եւ ասեր՝ մենք մեր ձեւով կմիջամտենք, «մ» տառը կմնար Սամվել Կարապետյանից, կարող է դա էլ չմնար: Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, Սահմանադրության, ընտրական կարգի հետ կապված որ երկրից ուզում է լինի, ուզում է՝ Ֆրանսիայից, ուզում է՝ Լիբանանից, ուզում է ԱՄՆ-ից լինի, բնական է, մենք դիմադրելու ենք եւ չենք թողնելու ՀՀ նամեստնիկ բերեն կամ դրսից տղա բերեն»:

Նիկոլ Փաշինյանը, Ալեն Սիմոնյանը եւ մյուսները փորձում են Սամվել Կարապետյանի քաղաքական գործունեությունը կապել Ռուսաստանի հետ, փորձում են ապացուցել, թե նա ուղղորդվում է Ռուսաստանից, Ռուսաստանը նամեստնիկ՝ տեղապահ է ուզում նրան կարգել Հայաստանում: Նման հայտարարությունների համար նրանք որեւէ հիմք կամ ապացույց չունեն, թերեւս՝ միայն այն, որ Կարապետյանը նաեւ ՌԴ քաղաքացիություն ունի: Ի վերջո, մենք չգիտենք, թե ՔՊ խմբակցության կամ կառավարության կազմում Թուրքիայի կամ Ադրբեջանի քանի քաղաքացի կա, նման տեղեկությունները գաղտնի են պահվում, բայց ՀՀ քաղաքացիների մի ստվար մասը համոզված է, որ նրանք իրականացնում են Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից թելադրվող քաղաքականությունը, որ նրանք այդ երկրների նամեստնիկներն են: Եվ ոչ միայն նրանց:

Նամեստնիկի մասին խոսակցություն-եզրույթը դաշտ նետելն այլ նպատակ ունի. գործող ռեժիմը, գիտակցելով իր մոտալուտ պարտությունը եւ վախճանը, այլ ելք չի ունենալու, քան ընտրությունների նախաշեմին իր քաղաքական հակառակորդների առաջ ընտրություններին մասնակցելու արգելք սահմանելը, ռուսական հետք հայտնաբերելը, «հիբրիդային հարձակումը» կանխելը: ԵՄ ներկայացուցիչները բազմիցս են ասել, որ Հայաստանում քաղաքական իրավիճակը շատ նման է Մոլդովային, որտեղ իբրեւ թե ընդդիմությունը կառավարվում էր Ռուսաստանի կողմից, եւ իրենց հրահանգով Մոլդովայի իշխանությունները չեզոքացրին քաղաքական հակառակորդներին՝ ընտրություններին մասնակցելու արգելք սահմանելով: Հիմա «իրենց ձեւով» փորձելու են նույնն անել նաեւ Հայաստանում, եւ միակ հարցն այն է, թե առաջիկա ընտրություններում ով է հաղթելու՝ «Իրե՞նց ձեւով»-ը, թե՞ «Մեր ձեւով»-ը:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՍՏ IQ-Ի

Դեռ 2021-ի ընտրություններից առաջ կանխազգում էի աղետը՝ քաղաքական խեղկատակի վերընտրությունը: Մոտ 30 տարի տարբեր կարգավիճակներով լինելով ընտրական հանձնաժողովներում, գիտեի, որ գիտակցված ընտրություն կատարում է ընտրողների միայն 12-15%-ը, մնացյալն աղն առնող վազող է (եւ դա հիմնականում կիսագրագետ զանգվածն է եւ այն զանգվածը, որը քվեարկում է անձնական շահից դրդված): Փորձում էի ելք փնտրել ստեղծված իրավիճակից, որպեսզի չգիտակցված ընտրությունը վճռորոշ ազդեցություն չունենար ընտրությունների արդյունքների վրա ...Եվ կարծես մեզ հաջողվել է գտնել այդ ճանապարհը, նույնիսկ եթե ոչ ամբողջական լուծում տալ հիշյալ պրոբլեմին, ապա առայժմ՝ գոնե մասամբ, որը հետագայում լրամշակվելով նաեւ այլոց կողմից, կարող է կատարյալ տեսքի բերվել եւ կփակի քաղաքական ահաբեկիչների մուտքը պետության բարձրագույն պաշտոններ եւ կբացառի ազգային աղետները, որի մեջ ենք այսօր:

Հայտնի է, որ ՀՀ քաղաքացիների 2%-ն անգրագետ է: Այս անգրագետ քաղաքացուն հավասար իրավունք տալ՝ Սահմանադրական հանրաքվեին մասնակցելու գիտությունների դոկտորի հետ հավասար կարգավիճակով, հանցագործություն է: Ինչո՞ւ խառատն ու ֆրեզերագործը, օդաչուն ու ծովայինը.... միմյանցից որակապես առանձնացվում են կարգով եւ ըստ այդմ էլ՝ տարբեր իրավունքներ ու պարտականություններ ունեն, մինչդեռ այդ նույն իրավունքն ընտրության պարագայում բացակայում է: Համազգային աղետներից խուսափելու համար եւ հանուն արդարության, յուրաքանչյուր քաղաքացի ընտրական քվե պիտի ստանա՝ ըստ իր անհատական IQ-ի: Այսինքն, ընտրողները կունենան տարբեր քվեների իրավունք: Բարձր IQ ունեցող ընտրողը կարող է ստանալ ավելի շատ քվե, իսկ ցածր IQ ունեցողը՝ պակաս թվով քվե (պայմանականորեն՝ 10 եւ 1), որը հնարավորություն կտա որակապես բարձր քվե ունեցող ընտրողներին կարգավորել եւ հավասարակշռել ընտրությունների ելքը՝ բացառելով կամ նվազագույնի հասցնելով քաղաքական ավանտյուրիստների մուտքը իշխանություն:

Այդ նպատակով պետք է ստեղծվի մշտապես գործող հանձնաժողով, որի կազմի մեջ կմտնեն, ինչպես սփյուռքի, այնպես էլ ՀՀ այն հեղինակավոր մտավորականները, ովքեր երբեւէ որեւէ կուսակցության անդամ չեն եղել: Հանձնաժողովը պիտի ունենա մինչեւ 10 հազար հարցերի բազա, որի միջոցով էլ կորոշվի քվեարկողի անհատական IQ-ն եւ, ըստ այդմ էլ՝ քվեների քանակը: Ընտրողը ընտրությունից ընտրություն ընկած ժամանակաընթացքում սեփական IQ բարձրացնելու նպատակով կարող է դիմել հանձնաժողովին (կամ մասնաճյուղերին)՝ 6 ամսից ոչ շուտ, ամեն անգամ հանձնաժողովի հաշվին մուծելով սիմվոլիկ վճար (առաջին թեստն անվճար է): Առավելագույն քվե ունեցողի անհատական IQ-ն պահպանվում է միայն մեկ գումարման ընթացքում: Հետո նա նորից պետք է IQ թեստ հանձնի: Թեստ հանձնելուց հնարավոր է նաեւ քվե կորցնել: Ընտրությունը պետք է լինի պարտականություն եւ ոչ թե իրավունք: Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է մասնակցել ընտրություններին: Ընտրության չմասնակցած քաղաքացին տուգանվում է եւ զրկվում որոշակի իրավունքներից: Օրինակ՝ արգելվում է ընտրության չմասնակցած քաղաքացու ելքը երկրից կամ արգելվում է բանկերի հետ գործարքը: Կարծում ենք, ապագայում օրակարգային պիտի լինի նաեւ բաց քվեարկության իրավունք, որը հնարավորություն կտա ընտրողին՝ պատասխանատվություն կրել իր ընտրության համար: Ի դեպ, այս կարգը գործում է Հարավային Ասիայի մի քանի երկրում: Փակ, գաղտնի քվեարկությունը կեղծիքի տանող ճանապարհ է: Այն մտածողները հենց այդ նպատակով էլ դա արել են: Ընտրությունը, որպես կայացած կատեգորիա, առաջին անգամ կիրառվել է Հելլադայում, որտեղ ընտրությունները բաց քվեարկությամբ էին տեղի ունենում:

Հայաստանի 1-ին հանրապետությունը եթե ոչ առաջին, ապա առաջիններից մեկն է, որտեղ կանայք քվեարկելու իրավունք են ստացել: Ուրեմն այս հարցում էլ ինչո՞ւ չփորձել կրկին առաջինը լինել:

Գագիկ ԱՐԾՐՈՒՆԻ
ՀՀ քաղաքացի

ՊԱՏԱՍԽԱՆ

«Դրապարակ» օրաթերթում երկու հոդված ենք հրապարակել՝ «Անիմանալի են գործերը մեր կառավարության», «Երկու անշունչ լիճ, երրորդի կրծքում էլ իսկի շունչ չկա», որի առնչությամբ Վանաձորի համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատար Արկադի Փելեշյանի պատասխանն ենք ստացել: Շնորհակալ ենք արձագանքի համար, որովհետեւ հանրային խնդիրների շուրջ երկխոսությունը

ՎԱՆԱՁՈՐԻ ԼՃԵՐԸ, ԱՂԲԱՎԱՅՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԻ ՀԱՆԴԵՊ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

միշտ էլ կարեւոր է, հատկապես՝ երբ խոսքը վերաբերում է քաղաքի սանիտարական վիճակին, բնապահպանական խնդիրներին:

Աղբահանության ոլորտում արված աշխատանքը տեսանելի է. համայնքապետի ներկայացրած տվյալները վկայում են, որ վերջին տարիներին աղբահանության ոլորտում իրականացվել են զգալի քայլեր: Ստեղծվել է «Վանաձորի քաղաքային տնտեսություն» ՀՈԱԿ-ը, ձեռք են բերվել նոր աղբատար մեքենաներ, բազմաֆունկցիոնալ կոմունալ տեխնիկա, մեծ թվով աղբամաններ: Այս ամենը հնարավոր է դարձել նաեւ սուբվենցիոն ծրագրերի, Տարածքային զարգացման հիմնադրամի եւ ԵՄ «ԿԿԿ դաշինք» ծրագրի շրջանակներում:

Պետք է արձանագրել՝ քաղաքում սանիտարական մաքրության մակարդակը նախորդ տարիների համեմատ բարձրացել է: Սա տեսանելի է եւ գնահատելի: Մանավանդ՝ այն պայմաններում, երբ արդեն ավելի քան 4 տարի համայնքը գործում է ժամանակավոր պաշտոնակատարի կառավարման ռեժիմում, իսկ ավագանու նիստերի գումարումը հաճախ դառնում է դժվար, երբեմն՝ գրեթե անհնար խնդիր: Այսպիսի պայմաններում նույնիսկ ընթացիկ կառավարման կայուն պահպանումն ինքնին հեշտ գործ չէ: Սակայն միեւնույն ժամանակ համայնքապետի պատասխանում եւս արձանագրվում է, որ հիմնական չլուծված խնդիրը շարունակում է մնալ Վանաձորի աղբավայրի հարցը: Տարիներ առաջ մեկնարկած «Կոշտ թափոնների ինտեգրված կառավարման համակարգ» ծրագիրը պետք է դառնար համակարգային լուծում՝ նոր սանիտարական աղբավայր, աղբի վերամշակում, ժամանակակից չափանիշներով աշխատող գործարան: Այսօր, սակայն, ծրագիրը դեռեւս չի գործարկվել՝ պայմանավորված ավագանու որոշման եւ համապատասխան կառույցի՝ ՓԲԸ-ի ստեղծման անհրաժեշտությամբ: Մինչ այդ, Վանաձորի աղբը շարունակում են տեղափոխել նույն տարածք, որտեղ տասնամյակներ շարունակ այն կուտակվում է: Իսկ հանրապետության վարչապետը ժամանակին ասում էր՝ աղբը ռեսուրս է, եթե այն ռեսուրս է, ապա այն չկառավարելը ոչ միայն սանիտարական, այլեւ տնտեսական կորուստ է: Մենք չենք փնտրում մեղավորներ: Բայց չենք կարող չարձանագրել՝ այս կարեւոր հարցը դեռեւս լուծում չի ստացել: Հուսանք՝ առաջիկայում այդ ուղղությամբ կիստակեցվեն քայլերը եւ ժամանակացույցը:

Երեք լճերի վերաբերյալ համայնքապետարանի պատասխանը հստակ է. «Երեք լճերը» գտնվում են «ՎԱՆԱՁՈՐ-ՔԻՄՊՐՈՄ» ՓԲԸ-ի հաշվեկշռում եւ չեն պատկանում համայնքին, ուստի համայնքը չի կարող կատարել կապիտալ ներդրումներ»:

Իրավական առումով գուցե ձեւակերպումը ճիշտ է, սակայն իրականությունը բոլորիս աչքի առաջ է. քիմգործարանը փաստացի դադարեցրել է գործունեությունը, տարածքներն ավերված են, կառույցները՝ կիսաքանդ: Եթե սեփականատերը տարիներ շարունակ չի իրականացնում պահպանման եւ խնամքի պարտավորություններ, ապա լճակներն աստիճանաբար վերածվում են ոչ թե պարզապես լքված տարածքի, այլ առողջապահական ռիսկի գոտու:

Հարցը միայն գեղագիտական չէ: Միջին լճակով հոսող կոյուղաջրերի մասին մեր բարձրացրած խնդիրը պատասխանի մեջ շրջանցված է: Իսկ դա արդեն սանիտարական անվտանգության հարց է: Եթե քաղաքի կենտրոնում առկա է կեղտաջրերի բաց հոսք, որը կարող է դառնալ վարակի աղբյուր, ապա խնդիրը դուրս է զուտ սեփականության իրավական շրջանակից եւ դառնում է հանրային խնդիր:

Այո՛, եթե իրավական սահմանափակումներ կան, եւ համայնքը չի կարողանում անմիջապես ներդրումներ կատարել մասնավոր սեփականությունում, ապա գուցե անհրաժեշտ է միջգերատեսչական համագործակցություն, սեփականության կարգավիճակի վերանայում, պետական միջամտություն կամ այլ իրավական լուծումներ: Քաղաքի սրտում գտնվող տարածքը չի կարող անտեր մնալ միայն այն պատճառով, որ հաշվեկշռում ինչ-որ անուն է գրանցված, այն էլ՝ չգործող ՓԲԸ-ի անունը: Քիմգործարան այլեւս չկա: Բայց քաղաքը կա: Բնակիչները կան, եւ նրանք իրավունք ունեն անվտանգ ու բարեկարգ միջավայրում ապրելու:

Մենք գիտակցում ենք, որ համայնքային իշխանությունը գործում է բարդ քաղաքական եւ կառավարչական պայմաններում: Ավագանու նիստերի չկայանալն էլ, հասկանալի է, քաղաքական նկատառումներից է բխում, բայց լուրջ խոչընդոտ է ռազմավարական որոշումների ընդունման համար: Եթե այսօր որոշ խնդիրներ օբյեկտիվ պատճառներով հնարավոր չէ ամբողջությամբ լուծել, ապա գոնե կարեւոր է հստակ ձեւակերպել՝ ինչն է հնարավոր հիմա, ինչն է հետաձգվում եւ ինչու, ինչ տեսլական կա վաղվա համար:

Վանաձորը սիրող մարդիկ քիչ չեն: Համայնքապետը եւս բազմիցս ցույց է տվել, որ քաղաքը համարում է իր պատասխանատվության տարածք: Հետեւաբար վստահ ենք՝ նույն մոտեցումը կարող է ցուցաբերվել նաեւ լճակների եւ աղբավայրի նկատմամբ՝ իրավական եւ կազմակերպչական լուծումների որոնման միջոցով: Եվ եթե այսօր դա դժվար է, չի նշանակում, որ ձեւն ու հնարավորությունները չկան: Պարզապես պետք են համատեղ կամք եւ հետեւողականություն:

ՀԳ. *Հուսանք, որ համայնքային լիարժեք կառավարման պայմաններում հնարավոր կլինի ավելի համակարգային լուծումներ տալ ինչպես աղբավայրի, այնպես էլ լճակների հարցերին: Քաղաքը շահում է, երբ իշխանությունն ունի գործելու հնարավորություն եւ պատասխանատվությունն ամբողջ ծավալով իրականացնելու պայմաններ: Եթե ապագայում համայնքային կառավարումը գործի լիարժեք ինստիտուցիոնալ հնարավորություններով, համոզված ենք՝ կբացվեն նաեւ այն խնդիրների լուծման ճանապարհները, որոնք այսօր առկախված են:*

ԻՆՉ ՔՆՆԱՐԿՎԵՑ ՄՅՈՒՆԽԵՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Փետրվարի 13-15-ին Գերմանիայի Մյունխեն քաղաքում տեղի ունեցավ անվտանգության հարցերով հերթական՝ արդեն 62-րդ ամենամյա միջազգային կոնֆերանսը: Այն ավանդաբար համարվում է միջազգային քաղաքականության, անվտանգության եւ ռազմավարական կայունության հարցերի քննարկումների համար գլոբալ ամենաազդեցիկ ու հեղինակավոր հարթակներից մեկը: Մասնակցում են թե՛ պետությունների եւ կառավարությունների ղեկավարներ, թե՛ պաշտպանության եւ ԱԳ նախարարներ, թե՛ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, թե՛ ռազմական փորձագետներ, վերլուծաբաններ եւ այլն:

Ամփոփելով կոնֆերանսի արդյունքները, ըստ միջազգային մամուլում տեղ գտած հրապարակումների, նշենք, որ այս տարվա կոնֆերանսն էլ, ինչպես վերջին մի քանի տարիներինը, տեղի ունեցավ գլոբալ աշխարհակարգում տեղի ունեցող խորքային տեղաշարժերի ֆոնին: Իսկ ավելի կոնկրետ՝ ուկրաինական պատերազմի շարունակման, Մերձավոր Արեւելքի լարվածության, Արեւմուտք-Չինաստան ռազմավարական մրցակցության պայմաններում, երբ նաեւ չափազանց արդիական են էներգետիկ, կիբերանվտանգության եւ այլ հարցեր: Ընդհանուր առմամբ, զգացվում էր, որ աշխարհը գտնվում է պատմական շրջադարձային փուլում, ու չնայած դիվանագիտական ընդունված ձեւակերպումներին ու զսպվածությանը, արծարծվող թեմաների շրջանակում ավելի ու ավելի հաճախ էին հնչում «հին աշխարհակարգն ապրում է իր մայրամուտը» տրամաբանությամբ տեսակետներ:

Թեմատիկ առումով հիմնական քննարկվող հարցերն էին՝ Ուկրաինան եւ եվրոպական անվտանգությունը, անդրատլանտյան հարաբերությունները, Չինաստանն ու գլոբալ մրցակցությունը, Մերձավոր Արեւելքն ու էներգետիկ անվտանգությունը, կիբերանվտանգությունն ու արհեստական բանականությունը: Իհարկե, հարթակը պաշտոնական որոշումների կայացման մարմին չէ, սակայն, ամեն դեպքում, ուղենշվեցին մի շարք հարցեր, որոնք առաջիկայում կլինեն գլոբալ քաղաքական օրակարգում, ինչպիսիք են՝ անհրաժեշտ է, որ Եվրոպան ամրապնդի իր դիրքերն ու ունենա սեփական անվտանգություն, պետք է արձանագրել, որ աշխարհում խոշոր տերությունների միջեւ մրցակցությունը սրվել է ու նաեւ՝ պետք է արձանագրել, որ տեխնոլոգիաների նշանակությունն աշխարհում կտրուկ աճել է, եւ դրանք ներկայում հանդիսանում են աշխարհաքաղաքականության ազդեցիկ ուժ եւ գործոն:

Կոնֆերանսը նաեւ բացահայտեց այն խնդիրներն ու տարաձայնությունները, որոնք կան Միացյալ Նահանգների եւ եվրոպական դաշնակիցների միջեւ՝ անդրատլանտյան դաշինքի ներսում, եւ որոնք կապված են հիմնականում Ուկրաինային հետագա աջակցության հարցի, ՆԱՏՕ-ում ռազմական ծախսերի բաշխման համամասնության ինչպես նաեւ՝ Եվրոպայի ռազմավարական ինքնավարության հետ, Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ, ԱՄՆ+ԵՄ եւ Չինաստանի միջեւ, ԵՄ երկրների՝ միմյանց միջեւ, ԵՄ եւ Գլոբալ հարավի միջեւ, որոնք հիմնականում կարելի է համարել բաղադրիչներ՝ գլոբալ աշխարհակարգի փոփոխման համատեքստում:

Հեղինակներ, որոնք փորձում են կենդանի պահել արեւմտահայերենը

Վեհանույշ Թեքեյանը կարեւոր դեր ունի սփյուռքահայ ժամանակակից՝ արեւմտահայերեն գրող հեղինակների մեջ: Նա շարունակում է իր կարողությունների չափով կենդանի պահել արեւմտահայերենը հայկական սփյուռքում: Ծնվել է 1948 թվականին՝ Բեյրութում: Ուսանել է անգլիական գրականություն եւ փիլիսոփայություն Բեյրութի ամերիկյան համալսարանում: Գրել սկսել է վաղ տարիքից: Մշտապես հրապարակվել է հայկական սփյուռքի պարբերական մամուլում: Ներկայում ապրում է Նյու Ջերսիում: Հեղինակ է արձակ եւ բանաստեղծական 11 հատորների: Վեհանույշ Թեքեյանը պատկանում է 1968 թվականի սերնդին, որը Գրիգոր Պըլտյանի, Մարկ Նշանյանի, Խաչիկ Թոլոյանի եւ Ժիրայր Լիպարիտյանի հետ հանդես է եկել սփյուռքյան կյանքի եւ ինքնության խոր վերահիմաստավորման օգտին: 2022 թվականին նա հրատարակվել է Երեւանում: «Կինը փորձությունների եւ հայտնությանց մեջ» գործում նա շարունակում է Վիրժինիա Վուլֆի գիծը: Գործը նվիրված է երեք սերնդի կանանց: Ընտիր արեւմտահայերենով նա ներկայացնում է առօրյա կենցաղն ու արարողությունները, խոհանոցն ու ավանդույթները: Նրան անվանում են par excellence սփյուռքի պոետ, եւ դա միայն ճանաչում չէ, այլեւ յուրօրինակ պարադոքս, քանի որ նա մի վայրի պոետ է, որը Հայաստան չէ ու որը մինչեւ վերջ չէ, որ կարելի է համարել հայրենիք ու տուն:

Ստորջրյա հաղորդալար է վնասվել

Վնասվել է Բալթիկ ծովի հատակով անցնող եւ Լեհաստանի ու Շվեդիայի էներգետիկ համակարգերն իրար միացնող կաբելը: Այս մասին հայտնում են լեհական լրատվամիջոցները: Վնասվածքի պատճառով երկու երկրների միջեւ էներգետիկ կապն անջատվել է: Լեհական կողմը տեղեկացնում է, որ երկրի էներգետիկ համակարգը դրանից չի տուժել՝ այն աշխատում է բնականոն հունով: Պաշտոնական հայտարարության մեջ նշված է, որ տեղի ունեցած վթարը, ըստ ամենայնի, կանխամտածված գործողության հետեւանք չէ, եւ ներկայում իրականացվում են վերականգնողական աշխատանքներ, որոնք շուտով ավարտին կհասցվեն:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ

ԵՐԲ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԻ ԱՐՎԵՍՏԱՆՈՑԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՓԱԿ Է, ՆԱ ՉԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՔԱՆԴԱԿ ՏԵՂԱՓՈԽԵԼ

Հյուրընկալվել էի լոռեցի քանդակագործ Արամ Մարգարյանի՝ Ադոյի տուն-արվեստանոցում: Քաղաքի հարավային մասում, տրիկոտաժի նախկին ֆաբրիկայի մոտակայքում՝ արտաքուստ համեստ այդ կացարանում նա ավարտում էր Վահան Տերյանի կիսանդրին: Ասաց՝ մտադիր է նաեւ բանաստեղծի հարթաքանդակը կերտել եւ դրանցից մեկը նվիրել Վանաձորի Վահան Տերյանի անվան դպրոցին: Քաղաքին նվիրելը նրա համար նոր չէ: Տասնյակ քանդակներ, հուշարձաններ, հարթաքանդակներ այսօր զարդարում են Վանաձորի փողոցները, զբոսայգիները, հրապարակները: Դրանք վաղուց դարձել են քաղաքի դիմագծի մաս: Հարցրի՝ ավելի խոշոր գործերի ծրագրեր ունի՞. գրանիտից, տուֆից, մարմարից:

Հոգոց հանեց. «Լավ է, որ պատվեր չունեմ»: Զարմացա: Լոռեցի մեկ այլ հայտնի քանդակագործ Գերասիմ Թումանյանից ժամանակին լսել էի նման դժգոհություն. «Քաղաքապետարանը քանդակագործներիս գործ չի պատվիրում, հոգնել ենք ... չհոգնելուց»: Ադոյի նման քանդակագործի ձեռքերն ինչպե՞ս կարող են «քոր չգալ»: «Քոր են գալիս,- պատասխանեց,- բայց տան ճանապարհը փակել են: Եթե մեծ քարով քանդակեմ, բեռնատարը ո՞նց պիտի մտնի բակ»:

Այսպես ծանոթացա պատմությանը, որն իսկապես ոդիսական է հիշեցնում: Ադոյի խոսքով՝ տարիներ առաջ հարեւան հողամասը երեք մետրով ընդլայնվել է դեպի փակուղի, որը տանում է իր տուն-արվեստանոց: Արդյունքում նեղացել է իր արվեստանոցի մուտքը: Նրա պնդմամբ՝ այժմ դժվար է ոչ միայն բեռնատարի մուտքը, այլեւ հրշեջ կամ շտապօգնության մեքենայի մոտեցումը: Նա ցույց է տալիս փաստաթղթեր, դիմումներ, պատասխաններ: Ասում է՝ հողահատկացումը կատարվել է դեռեւս մինչեւ Վանաձորի համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատար Արկադի Փելեշյանի պաշտոնավարումը: Դիմել է տարբեր ատյանների: Ստացել է գրավոր պատասխաններ, որոնք հիմնականում հաստատել են տարածքի «օրինականությունը»:

Մենք հարցում ուղարկեցինք Վանաձորի համայնքապետարան: Համայնքապետի պաշտոնակատար Արկադի Փելեշյանը գրավոր հայտնեց, որ քաղաքացու դիմումներին տրվել են գրավոր պատասխաններ, որտեղ փաստարկված է խնդրո առարկա տարածքի օրինականությունը, եւ առկա են բոլոր համապատասխան փաստաթղթերը. «Հարգելի պարոն Անտոնյան, ինչ վերաբերում է Արամ Մարգարյանի՝ Ձեր կողմից նշված դժգոհությանը, ապա քաղաքացու դիմումներին տրվել են նաեւ գրավոր պատասխաններ, որտեղ փաստարկված է խնդրո առարկա տարածքի օրինականությունը: Առկա են բոլոր համապատասխան փաստաթղթերը: Հարգանքով՝ Արկադի Փելեշյան»:

Պաշտոնական դիրքորոշումը պարզ է՝խնդրի մասին տեղյակ ենք, բայց ոչինչ չենք կարող անել: Սակայն այստեղ առաջանում է հարց. եթե ամեն ինչ օրինական է, ապա արդյո՞ք ճանապարհը բավարար լայնություն ունի նախատեսված գործառույթների համար: Գուցե ամենապարզ փորձը լինի մի բեռնատար փորձել հասցնել նշված արվեստանոց: Եթե առանց դժվարության հասնի, ուրեմն հարցը փակված է: Եթե ոչ՝ ուրեմն

փաստաթղթերից բացի, կա նաեւ «ֆիզիկական» արգելք-իրողություն: Ադոն նույնիսկ կատակով ասում է՝ պատրաստ է խոշորացույց վերցնել եւ ճանապարհին փնտրել՝ արդյո՞ք կաբելներ, ջրագծեր կամ այլ ենթակառուցվածքներ կան, որոնց առկայությամբ ճանապարհի նեղացումը չէր կարող իրավաչափ լինել: Բայց սա, իհարկե, արդեն մասնագիտական փորձաքննության խնդիր է, ոչ թե՝ քանդակագործի:

Այս պատմության տարօրինակ կողմն այն է, որ քաղաքին տասնյակ հուշարձաններ նվիրած արվեստագետն այսօր զրկված է խոշոր ստեղծագործություններ ձեռնարկելու հնարավորությունից՝ ոչ թե գաղափարի բացակայության պատճառով, այլ՝ ճանապարհի: Երկու կողմի պնդումները հակասում են՝ համայնքապետարանը վստահեցնում է՝ ամեն ինչ օրինական է: Քանդակագործը համոզված է՝ իր իրավունքը խախտվել է: Նման իրավիճակում վերջնական լուծումը կարող է տալ միայն դատարանը: Ի դեպ, Ադոն արդեն մտածում է այդ ճանապարհով գնալու մասին: Եվ գուցե դա է ամենաճիշտ ելքը, որպեսզի խնդիրը վերջապես ստանա իրավական, ոչ թե զգացմունքային հանգուցալուծում:

Եթե ճանապարհը բավարար է, թող դա ապացուցվի անկախ փորձաքննությամբ:

Եթե ոչ՝ թող վերականգնվի իրավաչափ վիճակը եւ մարդուն հնարավորություն տրվի ստեղծագործել: Քաղաքը չի շահում, երբ արվեստագետը կանգնում է նման փակուղու առաջ: Քաղաքը շահում է, երբ նման ոդիսականներն ավարտվում են օրենքի ուժով, եւ խնդրին լուծում է տրվում: Իսկ երբ նույն այդ ճանապարհով բեռնատարն առանց խոչընդոտի կմտնի արվեստանոց, կբեռնի նոր քանդակ եւ կտեղափոխի նշանակման վայր, Վանաձորը կստանա հերթական նվերը: Քաղաքն ու քաղաքացին կշահեն:

Նյութերը՝ Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆԻ

«ՀՐԱՊԱՐԱԿԻ» ԱՀԱԶԱՆԳՈՎ ԽԱՉՔԱՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵՑ

Մի քանի օր առաջ մեր թերթում տպագրված «Պղծված խաչքարը՝ Թուլուզում. լռություն եւ սպասում» վերնագրով հոդվածն ահազանգ էր հնչեցրել Ֆրանսիայի Հանրապետության մեծությամբ չորրորդ քաղաք Թուլուզի՝ Ժան Ժորեսի անվան կենտրոնական պողոտայում տեղադրված Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող տուֆակերտ խաչքարի պղծման մասին: Անհայտ անձինք հուշարձանն ապականել էին դժվար մաքրվող նյութով:

Դեպքի առնչությամբ առաջինն իր բողոքի ձայնն էր բարձրացրել սրտացավ մի ֆրանսուհի՝ Ալիս Էլվան Գելիկը: Նրա խոսքերն էին. «Հայոց զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը Թուլուզում պղծված է: Նման արարքը «հիմարաբար արված» սխալի արդյունք չէ: Սա լրջագույն ծաղր է զոհերի հիշատակի նկատմամբ: Թուլուզի քաղաքապետարանի լռությունն անընդունելի է: Պետք է անհապաղ գտնել մեղավորներին եւ պատժել»:

Այդ բարբարոսական արարքի մասին մենք գրել էինք. «Խաչքարը ոչ միայն ցեղասպանության զոհերի հիշատակի խորհրդանիշն է, այլեւ հայ ժողովրդի նվերն է թուլուզցիներին՝ որպես բարեկամության եւ երախտագիտության նշան: Եթե անգամ իրավապահ մարմինները դեռեւս չեն հայտնաբերել հանցագործներին, ապա հուշարձանի մաքրումն ու պատշաճ վիճակի վերականգնումը կարող էին անհապաղ կազմակերպել»:

Մեր հոդվածն իրենց կայքէջերում, Ֆեյսբուքում, այլ հարթակներում զետեղել էին «Նիդերլանդական օրագիրը», Չեխիայի «Օրերը», այլ լրատվամիջոցներ, այդ բարբարոսական արարքին անդրադարձել էին «Ինտերկապ» եւ այլ հասարակական կազմակերպություններ, ինչի համար շնորհակալ ենք: Բոլորիս համատեղ ջանքերով հարցը լուծվեց: Նկարում տեսնում եք, թե ինչպես է Թուլուզի ոստիկանության աշխատակիցը ջանադրաբար մաքրում գեղեցիկ

խաչքարը: Մեր ահազանգն իզուր չէր: Նկարը մեզ տրամադրել է Թուլուզի Հայ համայնքային խորհրդի պատասխանատու Տաթեւ Գեւորգյանը՝ շնորհակալ ենք:

Թուլուզի հայկական խաչքարը հիշողության ու բարեկամության խորհրդանիշ է՝ հարգանքի ու խնամքի արժանի:

ԽԵՂԵ ՕՁ

Ես, ինչ է, բանուգործս թողած՝ պիտի սկսեմ Ալեն Սիմոնյան քլնգվել: Սրանց, ախր, պետք չէ քլնգել, սրանց ս. անել է պետք: Եվ վաղուց էր պետք, որ քաղցկեղն այսքան չխորանար: Մենք ենք մեղավոր… Ո՛չ Էրդողանը, ո՛չ Ալիեւը, ո՛չ Փաշազադեն, ո՛չ Վենսը, ո՛չ Ֆոն Դեր Լայենը, ո՛չ էլ նույնիսկ Հռոմի պապը: Մի բան էր մնացել չապականված՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին: Չհանդուրժեցին: Խրվել՝ արմատներից են կրծում այդ կյանքի ծառը՝ միակ բանը, որ դեռ այս մի բուռ ժողովրդին կարող էր միաբան պահել: Թքեցին, մրոտեցին այս սատանայակերպներն ամեն ինչ… Ես ձեզ դեսը ղրկողի…

Ալեն, քեզ դատելը քիչ է: Քեզ էն մի քանի գյադեքի հետ պետք է կանգնեցնել ամոթի պատի տակ: ՔՊ-ն լավ էլ ընտրել է, թե ում պետք է առաջինը քարշ տալ այնտեղ: Սա ընդամենը առաջին տասնյակն է՝ 1. Փաշինյան Նիկոլ Վովայի, 2. Պապիկյան Սուրեն Ռաֆիկի, 3. Պապոյան Գեւորգ Հարությունի, 4. Միրզոյան Արարատ Սամվելի, 5. Ալեքսանյան Վահագն Հովիկի, 6. Ռուբինյան Ռուբեն Կարապետի, 7. Հարությունյան Արայիկ Էդուարդի, 8. Կոնջորյան Հայկ Արսենի, 9. Սիմոնյան Ալեն Ռոբերտի, 10. Թորոսյան Արսեն Գեւորգի… Էլի կան, որ սրանցից ոչնչով պակաս չեն, բայց Ալեն Սիմոնյանը որոշեց մի այնպիսի բան ասել, որ բոլորից ավելի այլանդակ ու փչացած երեւա: Ո՞նց թե՝ 4-5 բարձրաստիճան հոգեւորականներ մանկապիղծ են… Սա ի՞նչ բարբաջանք է, տո այ բանական կենդանի: Փաստեր ունե՞ս, եթե այո, ապա պետք է հրապարակես՝ անուն առ անուն նշելով այդ հոգեւորականներին: Եթե ոչ, ապա դու կորած ես, Ալեն, թե՛ որպես մարդ, թե՛ որպես հայ եւ թե՛ որպես հայր: Գիտե՞ս քանի հայի, քանի մարդու, քանի հոր ու պապի հոգիներն ես պղծել քո այդ հիմար հայտարարությամբ: Բա մարդիկ երեխա են կնքել, զավակ ամուսնացրել հոգեւորականների ձեռամբ, ծնունդ նշել, որդի ճանապարհել բանակ, ծնող ու հերոս զավակ հուղարկավորել եկեղեցով: Այսինքն, ի՞նչ է ստացվում, այ հիմար տղա, ուրեմն մանկապիղծնե՞րն են կնքել ու պսակադրել մեր երեխաներին, հուղարկավորել մեր ծնողներին ու հարազատներին: Դու էլ ես, կարծեմ, եկեղեցով ամուսնացել…

Ալեն, ես վստահ եմ, որ դու փաստեր չունես, եւ ավելի քան վստահ եմ, որ քեզ այդ արտահայտության համար դատարան են քարշ տալու: Դու եթերում «հետույք» բառն արտասանելու համար մարդ ես դատում, բայց դու դատվելու ես քեզ շատ ավելի մեծ այլանդակություն թույլ տալու համար: Թող հենց սա լինի հանցագործության մասին առաջին հաղորդումը դատախազությանը՝ քեզ պատասխանատվության ենթարկելու համար: Այնքան հայց է թափվելու գլխիդ, որ ողջ կյանքդ չի հերիքելու բանտային սռոկներդ լրացնելուն: Դու դեռ կհասցնես երազել կոլեգաներիդ հետ նույն պատի տակ կանգնելու մասին:

Ալեն, դու այս պահին պաշտոնավոր ես եւ կարող ես քրքջալ իմ՝ շարքային քաղաքացուս խոսքերի վրա, բայց լավ իմացիր, որ քեզ հետ այն աշխարհ ոչինչ չես տանելու, բացի իմ թուքն ու նախատինքը: Դու արդեն համոզվեցիր, որ ՔՊ-ի առաջին տասնյակում ես: Իսկ գիտե՞ս, թե ինչ սկզբունք ունի ՔՊ-ն եւ ինչպես է քվեարկում: Բացատրեմ: Առաջիններն ամենաայլանդակներն են: Օձին կծեն՝ օձը կսատկի: Հաջորդիվ՝ շարքային այլանդակները՝ ավելի քան 20 տասնյակ: Իսկ նրանք, որ տեղ չգտան այդ ցանկում, ամենայն հավանականությամբ, կամ հույս ունեն, որ դեռ կարող են զերծ մնալ խայտառակությունից, կամ ուղղակի չուզեցան շարունակել իրենց ընթացքը «Քաղաքացիական պոռնոգրաֆիա» կուսակցության հետ: Դուք առաջ «շիշ բռնող» ունեիք, հիշո՞ւմ եք: Նա չկա հիմա ցուցակում: Իսկ գիտե՞ք, թե ով է զբաղեցրել ձեր ցուցակի առաջին հորիզոնականը… Այո, Էրդողանի «գիրք բռնողը»: Այ, այսքան բարոյականություն ունի ձեր «Քաղաքացիական պոռնոգրաֆիան»:

ՀԳ. *Ալեն, դու գնա, շուրթերդ լվա ու ներողություն խնդրիր հայ ժողովրդից՝ նրա հոգու նուրբ լարերի հետ այսպես անզգույշ խաղալուդ համար: Մենաստան գնա, Ալեն, ՔՊ-ն քեզ ապագա չէ:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Telegram-ում մեծ զտում են արել

Telegram հավելվածում նախօրեին զանգվածային զտում է իրականացվել: Հավելվածի ղեկավարության կողմից արգելափակվել է 235 հազար 2828 ալիքի եւ խմբակային չատի գործունեություն: Այս տարվա հունվարի 23-ից սկսած, դա ամենաբարձր ցուցանիշն է, երբ արգելափակվել էր 300 հազար 840 ռեսուրս: Այս տարվա փետրվարի սկզբից ի վեր Telegram-ում արգելափակված ալիքների եւ խմբակային չատերի թվաքանակը հատել է 1,8 միլիոնը: Այս տարեսկզբից ի վեր արգելափակված ռեսուրսների թիվը կազմել է ավելի քան 7,2 միլիոն, ընդ որում՝ մոտ 28 հազարը եղել են ահաբեկչական բովանդակության: Հիշեցնենք, որ միջազգային իրավական ատյանները մի քանի որոշում են կայացրել Telegram-ում անթույլատրելի կոնտենտի տարածման առումով, եւ այս քայլերը դրա հետեւանքն են: Առհասարակ, Telegram-ը համարվում է ամենաազատ եւ գրաքննությունից զերծ ցանցը, որտեղ օրենքով արգելված բովանդակություն է տարածվում, ագրեսիա, ֆեյքնյուզ եւ անթույլատրելի այլ տեղեկատվություն:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 17.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՈՉ ԹԵ ԱՌԱՆՑ ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ, ԱՅԼ ԱՌԱՆՑ ՆԻԿՈԼԻ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Եթե Նիկոլին ու նիկոլական խմբակին թվում է, թե Հայաստանի Հանրապետության քաղաքացին իր այսօրվա խնդիրն է դարձրել կաթողիկոսությունը Հայաստանից հանելը կամ այն Հայաստանում պահելը, ապա չարաչար սխալվում են: Վաղուց արդեն Հայաստանի Հանրապետության քաղաքացու եւ մեր պետության խնդիրը ո՛չ կաթողիկոսությունը Հայաստանում պահելն է եւ ո՛չ էլ նրան Հայաստանից հանելը: Հայաստանի Հանրապետության քաղաքացու խնդիրն իրենց իշխանազրկելն է:

Եվ այդ խնդիրը՝ կաթողիկոսությունը Հայաստանից հանելը, ո՛չ երեկ, ո՛չ այսօր եւ ո՛չ էլ վաղը հայկական օրակարգում չի եղել, չկա ու չի լինելու: Եվ կասկած չկա, որ դրա մասին Նիկոլն ու իր խմբակը ոչ թե հիմա իմացան կամ հունիսի 7-ին նոր պետք է իմանան, այլեւ նրանք դրա մասին միշտ են իմացել: Խնդիրը, այս առումով, ոչ թե նրանց իմանալուն կամ չիմանալուն, այլ նրանց վախերին է վերաբերում:

Հարցն իրենց համար այն է, որ նրանք ոչ միայն գիտեն, այլ նաեւ վախենում են, որ հունիսի 7-ին Հայաստանի Հանրապետության քաղաքացին իր քվեարկությամբ իրենց կապացուցի, որ չի հանդուրժի հայկական պետության մի իշխանության, որը պետության կարողությունները ոչ թե հայությանն ու Հայ առաքելական եկեղեցուն պաշտպանելու, այլ նրա վրա հարձակվելու համար է օգտագործում: Վախենում են, որովհետեւ հասկանում են, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացին հունիսի 7-ի իր քվեարկությամբ կարող է նաեւ հայությանն ու Հայ առաքելական եկեղեցուն «պաշտպանել» ոչ միայն արտաքին թշնամիներից, այլեւ հենց իրենց նման իշխանություններից:

Նրանք վախենում են նաեւ, որովհետեւ գիտեն, որ մի օր, եւ բացառված չէ, որ այդ օրը հենց հունիսի 7-ը լինի, Հայաստանի Հանրապետության քաղաքացին ու այս պետությունն իրենց կապացուցեն, որ իրենք չեն հանդուրժի այն իշխանությանը, որը ոչ միայն չի հասկանում, որ հայությունն այս պետությունը ստեղծել է ոչ թե արհեստական օրակարգերով իրեն խաբելու, այլ Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ապահովելու եւ Մայր Աթոռն ու հայության հավատն անսասան պահելու համար:

Նրանք վախենում են նաեւ նրա համար, որովհետեւ գիտեն ու վստահ են, որ մի օր, եւ բացառված չէ, որ այդ օրը հունիսի 7-ը լինի, Հայաստանի Հանրապետության քաղաքացին ու այս պետությունն իրենց ապացուցեն, որ իրենք այս երկրի «հայկական ապագան» ավելի շատ ոչ թե առանց Գարեգի Երկրորդի կաթողիկոսության են պատկերացնում, որքան առանց Նիկոլի վարչապետության:

Վախենում են նաեւ, որովհետեւ հասկանում են, որ այլեւս մոտ է այն օրը, երբ Հայաստանի Հանրապետության քաղաքացին ու այս պետությունը ոչ միայն ալիեւներին ու փաշազադեներին, այլ նաեւ հենց իրենց կասեն, որ իրենք ոչ միայն թույլ չեն տա, որ ինչ-որ Ալիեւ կամ Փաշազադե Հայ առաքելական եկեղեցուն տեռորիստական կազմակերպություն հռչակեն, այլ նաեւ չեն հանդուրժի, որ պատահականորեն իշխանության հայտնված մի ինչ-որ խմբակ խեղի պետության հայկական բովանդակությունը եւ նրան հակահայկականության գործիք դարձնի: Ու այդքանը նրանք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացին ու Հայաստան պետությունը, կանեն ոչ թե կաթողիկոսությունը Հայաստանից տեղափոխելով, այլ հենց իրենց՝ նիկոլականներին, իշխանազրկելով ու Հայաստանից դուրս հանելով:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am